ԵՀՀ
ՀԱՍԱԼՍԱՐԱՆ

# ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

# ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ ԵՎ ՀՌԵՏՈՐԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՂՈՂ ԿԻՐԱՌՈՒԿՆԵՐ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

# ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ ԵՎ ՀՌԵՏՈՐԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՂՈՂ ԿԻՐԱՌՈՒԿՆԵՐ

## ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ. ՀԱՎԵԼՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ
2019

*ՀՏԴ 164.1:316.77:37.015.3(07)*
*ԳՄԴ 87.4+60.56+88.4գ7*

*Տ 912*

***Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ / Եվրասիա համագործակցություն հիմնադրամ***

Ձեռնարկը քննադատական մտածողության հազվագյուտ հրատարակություն է, որը գրված է հայերեն և նախատեսված է հայալեզու լսարանի համար: Այն հիմնված է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) մեթոդական և ուսումնական պրակտիկայի և իր մասնագետների կուտակած փորձի վրա: Ձեռնարկը պարունակում է քննադատական մտածողության և մեդիագրագիտության վերաբերյալ տեսական մաս, ինչպես նաև հայերեն թարգմանված տրամաբանական սխալների ցուցակ, հարմարեցված հայալեզու լսարանի համար:

***Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks / Eurasia Partnership Foundation***

The manual is a rare publication on critical thinking, written in Armenian and for the Armenian audience. It is based on the methodological and educational practices as well as the experience accumulated by the specialists of Eurasia Partnership Foundation (EPF). The manual contains the theoretical part on critical thinking and media literacy as well as list of fallacies translated and adapted to Armenian audience.

*Տ 912* *Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ.- Եր.: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2019.- 56 էջ:*

*Սույն ձեռնարկը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ:*

**Քննադատական մտածողություն (ՔՄ)**

**Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)**

**Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)**

**Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)**

*This manual is a part of the series of manuals published under the "EPF University" heading. The series include texts which belong to four large thematic directions:*

**Critical Thinking (CT)**

**War and Peace (WP)**

**Civil Society (CS)**

**Education, methodology of history, culture and values (EMHCV)**

**ՀՏԴ 164.1:316.77:37.015.3(07)**
**ԳՄԴ 87.4+60.56+88.4գ7**

**ISBN 978-9939-1-0974-9** **© Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2019**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1 Ներածություն. Գևորգ Տեր-Գաբրիելյան. Կառուցողական հաղորդակցական գործունեություն

22 Բառարան

22 1. Ֆորմալ տրամաբանական սխալներ

24 Պրոպոզիցիոն տրամաբանական սխալներ

25 Քվանտորային տրամաբանական սխալներ

25 Ֆորմալ սիլլոգիստական տրամաբանական սխալներ

27 2. Ոչ ֆորմալ տրամաբանական սխալներ

29 Հարաբերակցային հիմքով տրամաբանական սխալներ

40 Թյուր ընդհանրացումներ

42 Կարմիր ծովատառեխի (Red herring) սխալներ

46 Պայմանական կամ վիճելի տրամաբանական սխալներ

48 Հավելյալ գրականության համառոտ ցանկ

49 Abstract

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքը ծնվեց որպես հավելյալ արդյունք Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) կողմից տարիներ շարունակ իրագործվող մի շարք ծրագրերի. սկզբում Մեծ Բրիտանիայի ֆինանսավորմամբ իրագործվող հայ-ադրբեջանական երկխոսական ծրագրերի, որոնք շարունակվեցին՝ ֆինանսավորվելով Եվրոպական միության (ԵՄ)[1] կողմից. հետո՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ իրագործվող «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» (ՄՔՏՄ)[2] ծրագրի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի (ՄՆԿ)[3] առաջնորդությամբ իրագործվող: Այդ ծրագրերը թույլ տվեցին ԵՀՀ-ին զարգացնել իր նշանակալի մոտեցումները, որ մենք անվանում ենք կոնֆլիկտների տրանսֆորմացիայի և քննադատական մտածողության դպրոցներ: Դեռևս տարիներ շարունակ մենք, զուգահեռաբար մեր բազմամյա գործընկերոջ՝ ՄՆԿ-ի և այլ գործընկերների հետ միասին, աշխատել ենք կոնֆլիկտների լեզվի, մեդիայի լեզվի, մեդիագրագիտության վրա: Արդյունքը եղավ կամաց-կամաց ձևավորվող քննադատական մտածողության կրթական գործընթացի մեթոդաբանությունը:

«Քննադատական մտածողությունն» այսօր մոդայիկ բառակապակցություն է: Սակայն թե ինչ է այն նշանակում, որտեղ է սկսվում և որտեղ վերջանում, այս հարցերի շուրջ համաձայնություն չկա: Ես այստեղ չեմ պատրաստվում ձևակերպում տալ, միայն ասեմ, որ, մեդիագրագիտությանը և մեդիայի էթիկային զուգահեռ, սա մի մոտեցում է, որ ավելի խորքային է դիտարկում կոմունիկացիայի հարցերը:

Ես դժվարանում եմ «քննադատական մտածողության»՝ որպես կոնկրետ

1 «Խաղաղարարության ամրապնդում կարողությունների զարգացման և հանրային մասնակցության միջոցով» ծրագիր՝ http://epfarmenia.am/hy/project/peace

2 «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագիր՝ http://epfarmenia.am/hy/project/mice

3 Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը (ՄՆԿ)՝ http://mediainitiatives.am/

առարկայական մոտեցման ձևակերպում առաջարկել: Սակայն դրա ռադիկալ տարբերակը ելնում է այն դրույթից, որը հատուկ չէ մեդիագրագիտութուն առարկային կամ որից վերջինս խուսափում է, այն է՝ որ **կոմունիկացիայի՝ հաղորդակցության նպատակը, ի վերջո, նույնն է, ինչ մարդու կողմից մարդու հանդեպ իշխանության դրսևորման այլ ձևերի նպատակը՝ ստիպել կամ հասնել նրան, որ մարդը կոմունիկացիայի ազդեցության տակ անի այն, ինչ նա այլապես չէր անի:**

Խոսքը ոչ թե պարզունակ «մոգական գնդակ»[4] տեսությունների մասին է, այլ հաճախ ավելի բարդ ու մեծ մասամբ անուղղակի, սակայն շատ նշանակալի ազդեցությունների՝ կարծիքների, աշխարհայացքների ձևավորման, որոնք իրենց հերթին կանխորոշում են մարդկանց վարքը:

Անգլերեն power բառը ոչ հայերեն, ոչ ռուսերեն իր ողջ տարողությամբ չի թարգմանվում: Անգլերենում այն նշանակում է «կարողություն», «իշխանություն», «զորություն», «պետություն»: Որպեսզի այդ բոլոր հասկացությունների սինկրետիկ միասնությունն արտահայտած լինեմ՝ ես առաջ եմ քաշում «իշխ» հասկացությունը, որպես այդ բացակա բառի փոխարինիչ:

Եվ այսպես, **քննադատական մտածողությունն իր կիրառական-առարկայական դրսևորմամբ այն մոտեցումն է, որը ցանկացած կոմունիկացիան վերլուծում է այն տեսակետից, թե ի՞նչ իշխ է դրված նրա հիմքում, և ինչպե՞ս է բաշխվում իշխը նրա մասնակիցների միջև: Կարճ ասած՝ ի՞նչ է, ինչպիսի՞ն է ցանկանում հաղորդակցություն ուղարկողը՝ որպեսզի այդ հաղորդակցության ազդեցությունը լինի ստացողի վրա:**

Մեդիա մոտեցումները, մինչդեռ, սովորաբար սահմանափակվում են այն պնդմամբ, որ հաղորդակցության նպատակն ինֆորմացիայի հաղորդումն է[5]: Լինի սա լիբերալ անգիտակից, թե մտածված կարծիք, թե պարզապես առարկայական մոտեցում, չի կարելի չընդունել, որ, բացի այլ ակունքներից (ասենք, սեմիոտիկա, քաղաքագիտություն, պրոպագանդայի տեսություն)՝ հենց մեդիա ուսումնասիրություններն

4 Տես, օրինակ. http://smallbusiness.chron.com/magic-bullet-theory-mass-media-3346.html

5 Տես այստեղ քննարկված այդ երևույթը. http://gtergab.com/ru/news/methodology-2/the-information-world-a-group-report/110/

են՝ թեկուզև սկսած Մարշալ Մըքլուհանից, որ նվիրվել են նաև իշխի դրսևորումների հետազոտություններին հաղորդակցման և նրա նպատակադրման, գիտության և փիլիսոփայության մեջ:

Մեր դարը հատկապես զգայուն է իշխի հարաբերակցությունների հանդեպ, դրա անարդար բաշխման, թաքուն օգտագործման փորձերի և այլն: Մյուս կողմից՝ հասարակություններն այսօր առավել անպաշտպան են հաղորդակցության միջոցով իշխի ձեռնածությունների առջև:

Ուրեմն՝ **հենց իշխի բաշխման վերլուծությունն է հաղորդակցության մեջ, որ դառնում է քննադատական մտածողության մոտեցման հիմնաքարն այսօր,** ճիշտ ինչպես որ քսաներորդ դարի կեսերին իշխի բաշխման հարցերը հասարակությունում դարձան փիլիսոփայական քննադատական տեսության[6] կոնցեպտուալ մեխը:

Դա նշանակում է՝ ուշադրություն դարձնել այն հարցերին, թե ո՞վ է ասում, որտե՞ղ է ասում, ինչու՞ է ասում և, նայած թե ինչպես ասածը հասկանաս՝ ի՞նչ կկատարվի արդյունքում, - ոչ պակաս, քան նրան՝ թե ի՞նչ է ասվում: Մոդուսին ու պրագմատիկային[7], կոնտեքստին ուշադրություն դարձնել ոչ պակաս՝ քան բուն բովանդակությանը:

Բացի քննադատական տեսությունից՝ այս մոտեցումը քննադատական մտածողությունը (նրա կիրառական-առարկայական կերպը) կապում է այնպիսի ուղղությունների, ինչպես իրականության սոցիալական կառուցումը[8], պոստմոդեռնիզմի այն կիրառուկները[9], որոնք օգնում են վերլուծել իշխի բաշխումը (դեկոնստրուկցիա, սիմուլյակր և այլն[10]), նացիոնալիզմի գիտության մեջ՝ «երևակայված հանրություններ»[11] մոտեցմանը, և այլն:

Մենք այդ հարցերը սկսեցինք ձևակերպել շատ ավելի վաղ, քան

6 Տես https://en.wikipedia.org/wiki/Critical_theory

7 Տես սրանց մասին այստեղ. Ներածություն տեքստի հանդեպ քննադատական մտածողության (Jam Session 18)՝ http://epfarmenia.am/hy/video/Critical-Thinking-text-Introduction

8 Տես https://en.wikipedia.org/wiki/The_Social_Construction_of_Reality

9 Կիրառուկ. միջոց, մեթոդ, հնարք, «приём»

10 Տես հոդվածն այստեղ. http://gtergab.com/hy/news/essay/about-postmodernism-an-essay-2017-in-arm/146/

11 Տես https://en.wikipedia.org/wiki/Imagined_community: Տես նաև այստեղ. Երևակայական հանրույթներ, ռասիզմ, ազգայնականություն և կոնստրուկտիվիզմ (Jam Session 12). http://epfarmenia.am/hy/video/imagined-communities-nations

տեղի ունեցան աշխարհափոխ այն քաղաքական դեպքերը, որոնք այս բառակապակցությունն այդքան մոդայիկ դարձրեցին: Գուցե դրա պատճառն այն էր, որ արցախյան հակամարտությունը մեզ՝ հայաստանցիներիս, արցախցիներիս, ինչպես նաև ադրբեջանցիներին և աշխարհի բոլոր մնացած մարդկանց, ովքեր այս խնդրին տեղեկանում են, ստիպում է առավել ուշադիր լինել դեպի ձևակերպումները, դեպի կոնֆլիկտի տարբեր փուլերին զուգահեռ՝ նրա մեկնաբանությունների տարատեսակները: Տողերիս հեղինակն այդ հարցերին սկսել է անդրադառնալ դեռևս 1980-ականների վերջից՝ կոնֆլիկտի առաջին իսկ փուլից, երբ երկու ժողովուրդն էլ ակնհայտ տհաճությամբ էին ընդունում կոնֆլիկտի վերաբերյալ նյութերի ձևակերումները՝ գային դրանք միմյանցից թե այն ժամանակ դեռ գոյություն ունեցող «կենտրոնական» մամուլից[12]:

Տարածաշրջանում առկա այդ հակամարտությունը ստիպեց որոշ մտածողների, մեդիա մասնագետների, գիտնականների, խաղաղարարների և այլն, փորձել ձևեր գտնել կոմունիկացիոն ծուղակներից, սադրանքներից և անհաջողություններից խուսափելու:

ԵՀՀ-ն մինչև 2014-ը իր գործընկերների հետ ստեղծեց այնպիսի նյութեր, ինչպիսին են «Հայաստան–Ադրբեջան հարաբերությունների անաչառ լուսաբանում» բառագիրքը[13] և «Ինչին է ծառայում լրագրությունը» ուսուցողական ձեռնարկը[14]:

Եկավ 2014-ը՝ Ղրիմի գրավումը Ռուսաստանի կողմից, դոնբասյան պատերազմը, հետո՝ Բրեքզիտը, հետո՝ ԱՄՆ ընտրությունները[15], և այնպիսի հասկացություններ, ինչպես «ետ-ճշմարտություն», «տրոլինգ», «կեղծ լուրեր» կամ «հիբրիդ պատերազմ» (որի մի մասն ինֆորմացիոն պատերազմն է) դարձան ամենօրյա խնդիր աշխարհի խոշոր մասերի համար: Հենց այդ ժամանակ էլ **մեդիագրագիտությունը և քննադատական մտածողությունը վերջապես և, հուսով եմ,**

12 Տես այստեղ. http://gtergab.com/en/news/publicism/social-construction-of-a-conflict-1996-2011/24/

13 Տես այստեղ. https://epfarmenia.am/document/Glossary-Hate-Speech-in-Media-of-Armenia-and-Azerbaijan-English?fbclid=IwAR3kiVS00Feoz1XgXo-0dfM1iKJ0gKF--xjolW_9Ir235sBF0RniTZU6hIc կամ ռուսերեն՝ https://epfarmenia.am/document/Glossary-Hate-Speech-in-Media-of-Armenia-and-Azerbaijan-Russian?fbclid=IwAR04wuAz_baHkVhPJvJVLo1UXzZEP0kMrLG7nGJdfsgecehH-V624ho1hlk

14 Տես այստեղ. http://epfarmenia.am/hy/document/What-Journalism-serves-to

15 Տես. https://en.wikipedia.org/wiki/2016_United_States_presidential_election

**վերջնականապես գիտակցվեցին որպես առաջնային, բազային հմտություն ժամանակակից մարդկության համար**:

Իհարկե, նշված քաղաքական իրադարձությունները հնարավոր չէին լինի, եթե չլիներ օն-լայն տեխնոլոգիաների զարգացումն ու գերզարգացումը՝ նախորդ պատմական փուլի համեմատ. ինտերնետը, գուգլը և ֆեյսբուքը, ինչպես նաև սմարթֆոնային տեխնոլոգիաները, որոնց զարգացումն այդպիսի հստակ իրադարձություններով, թվում է, չի նշանավորվում, ինչպես վերը նշածս քաղաքական դեպքերը, դարձան, սակայն, այն տեխնոլոգիական միջոցները, որոնց շնորհիվ և պատճառով օն-լայն և վիրտուալ ինֆորմացիոն հոսքը ողողեց ու, կարելի է ասել, խորտակեց ողջ աշխարհը, ասես մի նոր Ջրհեղեղ՝ «Տիտանիկին», թվում է ֆիզիկապես չոչնչացնող, սակայն հինը կործանելու և նոր պահանջներ դնելու առումով՝ ոչ պակաս պատմականորեն, ըստ երևույթին, նշանակալի, քան այն, որը հաղթահարեց Նոյը, երբ իր տապանը վերջապես ապաստանեց Արարատ լեռան գագաթին:

**Նոր պատմական իրադրությունը փոխեց մարդու կյանքի շատ մոտեցումներ, կարիքներ և իմաստություններ. կարևոր դարձավ ոչ այնքան ինֆորմացիա գտնելը կամ իմանալը, որքան՝ նրանում կողմնորոշվելը[16], նրա ազդեցությանը դիմադրելը, այն զտելը: Նոր իրադրությունն ազդում է կրթության դարավոր փորձված մեթոդների վրա, մարդկանց համակեցության կանոնների, տնտեսության զարգացման, մի խոսքով՝ ողջ համաշխարհային քաղաքակրթության կյանքի բոլոր կողմերի:**

ԵՀՀ-ն և իր գործընկերները քիչ թե շատ պատրաստ էին այդ «ջրհեղեղին», շնորհիվ վերը ներկայացրած գործունեության: Ես 2014-ի վերջում գրեցի մի վերլուծություն[17], որտեղ փորձեցի ամբողջացնել իմ դիտարկումներն ինֆորմացիոն հեղեղի և իշխանության ու քաղաքականության նոր հարաբերակցության վերաբերյալ, որպես սկզբնակետ վերցնելով Օրուելի «1984»-ը:

Այդ տարվանից ի վեր մենք շարունակեցինք դպրոցների կազմակերպումը՝ երիտասարդներին ուսանելու համար այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են նոր իրադրության համար: Սակայն մեր

16 Ինպե՞ս դիմակայել ինֆորմացիոն հոսքի տարափին. Գևորգ Տեր-Գաբրիելյան (Jam Session 2)՝ http://epfarmenia.am/hy/video/how-to-withstand-information-flow

17 Տե՛ս այստեղ. http://gtergab.com/hy/news/essay/2014/87/

հնարավորությունները շատ մեծ չեն, և ամեն օր մենք տեսնում ենք, թե որքան ավելի ու ավելի է անհրաժեշտ մեդիագրագիտության ու քննադատական մտածողության տարածումը մեր երկրում և դրանից դուրս: Դրա համար էլ հենց ձեռնարկվեց սույն աշխատանքը, որպես նյութ՝ և՛ մեր դպրոցների մասնակիցների, և՛ հետաքրքվողների ավելի լայն խմբի համար:

Արդյունքում մենք զարգացրեցինք քննադատական մտածողության տրամադրման մեթոդիկան, գալով մի շարք եզրակացությունների:

Առաջինը՝ որ **քննադատական մտածողության հմտություններին լավ տիրապետելու համար (իշխի բաշխման հանդեպ զգայուն լինելու համար) մարդուն անհրաժեշտ է ունենալ, այսպես ասած, պոզիտիվ մտածողություն[18]:** Դա նշանակում է՝ **ունենալ արժեքներ, որոնք լինեն չափանիշներն իր գործունեության, աշխատել, որ իր խոսքի և գործի (վարքի) միջև անդունդ չլինի, և դնել ու իրագործել (լեգիտիմ) նպատակներ[19], այսինքն՝ տիրապետել պրոյեկտային պարադիգմի[20] սկզբունքներին:** Եթե այս գործոնները բացակա են, քննադատական մտածողությունն էլ շինծու և կեղծ կստացվի:

Սույն ներածությունը գրվում է հենց այդ նպատակով. որպեսզի տրվի այս աշխատանքի նախապատմությունը (դա արեցի), ինչպես նաև որպեսզի կարճ ասվի, թե **ինչպե՛ս պետք է օգտագործել քննադատական մտածողությունը:** Աշխատանքի հաջորդ էջերում դուք կգտնեք բառարանի պես մի բան, որը թարգմանություն է վիքիպեդիայի մի շարք նյութերի (և շնորհակալություն վիքիպեդիային դրա համար), սակայն թարգմանություն է հաճախ խմբագրված և վերամտածված ու վերաշարադրված: Նպատակն այս «բառարանի» այն է, որպեսզի մարդ տեղյակ լինի հնարավոր տրամաբանական և հռետորաբանական, կո-

18 Արխայիկ մտածողություն. Մաս 1. Տեսլականը և նպատակը՝ քննադատական մտածողության անհրաժեշտ մաս (Jam Session 31)՝ http://epfarmenia.am/hy/video/archaic-thinking-part-1

19 Լեգիտիմ նպատակն այն նպատակն է, որ ներփակ էգոիստական չէ և եթե իրագործվի՝ օգուտ կբերի մարդկության մի որևէ մասին, իսկ վնաս չի բերի (որքան որ կարող ենք մենք հաշվարկել նախապես), կամ առնվազն՝ եթե օգուտ էլ չբերի՝ անհետևանք կմնա (նեյտրալ ազդեցություն կունենա):

20 Տես այս մասին, ինչպես նաև այս ներածությունում արտահայտված շատ այլ մտքերի, այստեղ.
Ծրագրի արդյունքը և դրա տարատեսակները. տրամաբանական կառուցվածք (Jam Session 11)՝ http://epfarmenia.am/hy/video/program-outcomes-CSOs

մունիկացիոն սխալներին: Սա, իհարկե, վերջնական ցուցակ չէ, սակայն լավ ցուցակ է, այդ սխալների տարատեսակները ներկայացնող: Եվ եթե նախկինում սա կարող է պետք լիներ միայն մասնագետների, այսօր սա պիտի իմանա երկրագնդի յուրաքանչյուր բնակիչ:

Սակայն ի՞նչ անել այդ ցուցակի հետ: Ո՞րն է դրա կիրառությունը: Մի կողմից՝ այն թույլ է տալիս գնահատել ուրիշի խոսքն ու տեքստը, չխաբվել այն բոլոր «կիրառուկներից», որոնք մարդիկ օգտագործում են, որպեսզի հնչեն ավելի համոզիչ կամ նույնիսկ խաբեն մյուսներին (այդպիսով իշխ դրսևորելով նրանց հանդեպ և ստիպելով նրանց՝ վարվել այնպես, օրինակ՝ կարծել այնպես, ինչպես ցանկանում է ասողը, առանց բավարար լեգիտիմ հիմքի):

Մյուս կողմից, սակայն, սա նաև ուղեցույց է, թե ընթերցողն ի՛նքը ինչից պիտի խուսափի:

Եվ այստե՛ղ է խնդիրը, ու այս ներածության կարիքի և՛ս մեկ պատճառը. ինչի՛ց պետք է խուսափել՝ այս աշխատանքը բացատրում է: Սակայն ինչպե՞ս խուսափել, ի՞նչ անել, ի՞նչը հակադրել՝ այն չի բացատրում, և դա նրա նպատակն էլ չէ:

Մինչդեռ դա շատ կարևոր զենք ու միջոց է. ո՛չ միայն կարողանալ խոսքի ու տեքստի կեղծիքը վերծանել և չխաբվել, իշխը հասկանալ և դրա ոչ լեգիտիմ մասը չեզոքացնել, այլև կարողանալ դրանից խուսափել՝ սեփական վարքում:

Դա, իհարկե, առանձին ուսուցողական նյութ է պահանջում: Սակայն այս ներածության մեջ ես կնշեմ մի քանի սկզբունք, որոնք կարող են օգնել որպես նախնական կողմնորոշում:

Նախ՝ **կոոպերատիվ և կառուցողական կոմունիկացիայի օրենքներն ու ձևերը**[21] միակն են, որ **օգնում են մարդկանց միմյանց իրականում հասկանալ, և ոչ միայն հասկանալ, այլև համագործակցել համադրական բարօրության ու զարգացման համար: Հենց դրանք են, որ հավասարակշռում են իշխը:**

Կառուցողական կոմունիկացիան այն իրադրությունն է, երբ հաղորդագրության հեղինակն այն անում է առանց իշխ կիրառելու

21 Տե՛ս այստեղ. Կառուցողական և ոչ կառուցողական հաղորդակցություն. տերմիններ. http://epfarmenia.am/sites/default/files/inline-files/Training_Terms_Gevorg_Ter_Gabrielyan_25Oct2016.pdf

մտայնության, առանց ձեռնածուական կիրառուկների, bona fide (մաքուր խղճով), միակ նպատակն ունենալով՝ հաղորդել հաղորդման բովանդակությունը, որը, իր կարծիքով, թաքուն ենթատեքստ չունի և պիտի որ, իր իմացածով, հասկանալի ու վերծանելի լինի լսողի համար: Համապատասխանաբար՝ լսողն էլ ունի նախատրամադրվածություն՝ ընկալել հաղորդումն այնպես, ինչպես այն նախատեսված է, վստահում է հաղորդողին ու չի գտնում իշխի դրսևորում, մանիպուլյացիա կամ ոչ լեգիտիմ ենթատեքստ հաղորդագրության մեջ, և պատրաստ է ընկալել այն որքան կարելի է մոտ ընկալման այն նպատակին, որ իր հաղորդագրությամբ դրսևորել է հաղորդագրության հեղինակը:

Կոոպերատիվ կոմունիկացիան այս նույն իրադրությունն է՝ գումարած միասին որևէ գործունեություն իրագործելու նպատակադրումը, որ ունեն հաղորդակցվողները: Սա որոշակի հավելյալ հատկանիշներ է հաղորդում հաղորդակցությանը, սակայն չի փոխում նրա կառուցողական բնույթը:

Կառուցողական կոմունիկացիան անքակտելիորեն կապված է **«վստահություն»** հասկացության հետ[22], ինչպես նաև **«իշխանավորման»[23]. երբ հաղորդագրություն ստացողը զգում, հասկանում կամ համոզվում է, որ ուղարկողը նպատակ չի դրել անազնիվ կերպով իշխ գործածելու իր հանդեպ, նա զգում է վստահության պոռթկում և իշխանավորվում է, զորավորվում, իր՝ մարդ լինելու արժեքը գնահատված տեսնում և ամրապնդվում այն համոզմունքի մեջ, որ մարդը կարևորագույն արժեքն է:**

Սակայն, չնայած կառուցողական հաղորդագրությունը մակաբերում է վստահություն, հաճախ մենք չենք կարող հույս դնել երկուստեք կառուցողական կոմունիկացիայի օրենքները պահպանելու վրա: Քանի որ ստացողը, ամեն դեպքում, կարող է վստահություն չդրսևորել, ունենալ հավելյալ մոտիվներ կամ պարզապես չհասկանալ, թե իրեն ի՛նչ «գանձ» են առաջարկում, ի դեմս «ոչ-ապակառուցողական» հաղորդագրության:

22 Տես դրա վերլուծությունն այստեղ. Ինպե՞ս դիմակայել ինֆորմացիոն հոսքի տարափին. Գևորգ Տեր-Գաբրիելյան (Jam Session 2). http://epfarmenia.am/hy/video/how-to-withstand-information-flow, ինչպես նաև՝ Fukuyama, Trust: The Social Virtues and the Creation of Prosperity (1995). https://www.minneapolisfed.org/publications/the-region/trust-the-social-virtues-and-the-creation-of-prosperity

23 Առաջնորդություն. Գևորգ Տեր-Գաբրիելյան (Jam Session 6). http://epfarmenia.am/hy/video/Leadership-Gevorg-Ter-Gabrielyan

Ապա ի՞նչ անել այդ դեպքում:

Ահա մի քանի սկզբունք:

Նախ՝ ամենադժվարներից ու անհամոզիչներից մեկը, սակայն մի բան, որը պարտադիր է դառնում, իմ համոզմամբ, մեր «նոր ջրհեղեղի դարում». **մարդ պիտի ունենա անկեղծ ու ազնիվ արժեք և նպատակ՝ կոմունիկացիա իրագործելիս** (կրկնեմ վերն ասվածը): Դա նշանակում է՝ **մարդ պիտի ունենա քիչ թե շատ հստակ փիլիսոփայություն, որը պիտի գունավորի իր վարքը, գործունեությունը՝ նաև կոմունիկացիոն, նույնիսկ «մանր» դեպքերում**[24]**:** Որպես օրինակ՝ բերեմ ինքս ինձ. իմ սկզբունքների մի կարևոր մասը սահմանված է հետևյալ ոչ շատ երկար էսսեում[25]. և իմ կոմունիկացիոն շարժառիթների մեծ մասը, եթե ոչ անխտիր բոլորը, ելնում են այս սկզբունքներից:

Սա բարդ է այն մարդկանց համար, որոնք չունեն այսպիսի հստակ ձևակերպված աշխարհայացք և կամ չեն ուզենա ունենալ, քանի որ համոզմունքի այդպիսի խորքի չեն կարողանում հասնել որոշակի արժեքների շուրջ:

Սակայն մի՞թե նրանք պիտի զրկված լինեն ոչ կեղծ կոմունիկացիա իրագործելու հնարավորություններից: Բնավ: Մյուս կողմից՝ նրանց կոմունիկացիան կդառնա շատ ավելի հստակ ու սկզբունքային, եթե նրանք ունենան սկզբունքների հավաքածու, որոնց հիմքում մի կողմից իրենց արժեքներն են, մյուս կողմից՝ այն լեգիտիմ նպատակները, որոնց իրենք ուզում են հասնել, և այդ երկուսն էլ ներփակ էգոիստական չեն, քանի որ **կոմունիկացիան ինքնին հակաէգոիստական և հականերփակ՝ մարդուն դեպ աշխարհը «բացող» սոցիալական երևույթ է:** Բայց եթե նույնիսկ չունեն՝ **կառուցողական, արժեքահեն ու նպատակասլաց կոմունիկացիոն իրադրությանը մասնակցելը նրանց կօգնի ձևակերպել սեփական արժեքային համակարգն ավելի հստակ ու դառնալ ավելի նպատակասլաց հաղորդակցվող:**

Ավելին. **արժեքների տրոհման այս մեր դարում ընդհանուր հիմքերը, որոնք հեշտացնում են հաղորդակցությունը, ավելի ու ավելի են**

24 Արխայիկ մտածողություն. Մաս 1. Տեսլականը և նպատակը՝ քննադատական մտածողության անհրաժեշտ մաս (Jam Session 31). http://epfarmenia.am/hy/video/archaic-thinking-part-1

25 «Ինչու՞ է մարդն ապրում աշխարհում». http://gtergab.com/hy/news/media/why-do-people-live-in-the-world/32/

**պակասում, ինֆորմացիայի քանակի պատճառով, քանի որ ավելի ու ավելի քիչ են պատահում մարդիկ, որոնց համար մեյնսթրիմ դիտարկվող ինֆորմացիոն հոսքի բունը նույնն է**: Սա հիշեցնում է խորհրդային ժամանակների այն անեկդոտը, երբ շուկայի մսավաճառը որոշում է ընդունվել կոմունիստական կուսակցություն և, մուծվելով, առնում է իր կուսակցական տոմսը, սակայն ամեն դեպքում, թեկուզ ձևականորեն, պիտի «քննություն» հանձնի:

Հանձնաժողովն ուզում է, որ ինքն էլ, իրենք էլ հեշտ պրծնեն, և, ցույց տալով պատին կախած Մարքսի նկարը՝ նախագահը հարցնում է.

- Սա ո՞վ է:

Մսավաճառը չգիտի:

Մատնացույց են անում Էնգելսի դիմանկարը:

- Իսկ սա՞ ով է, գիտե՞ս:

Չգիտի:

Դե գոնե Լենինին էլ հո պիտի ճանաչի:

Բայց ոչ:

- Ախր ինչպե՞ս մենք քեզ ընդունենք կուսակցություն, եթե դու նույնիսկ Լենին չգիտես:

- Իսկ դու, օրինակ, փինաչի Մկոյին ճանաչու՞մ ես, - ասում է մսավաճառը:

- Ոչ, - ասում է նախագահը:

- Իսկ ջերկիր Կարոյի՞ն:

- Ոչ:

- Բա էլ ի՞նչ ես ուզում: Դու քո շրջապատն ունես, ես՝ իմը:

Այդպես, հիմա բոլորը տարբեր «շրջապատ» ունեն, տարբեր «նշանային» հասկացություններ ու հանգրվաններ:

Եվ այդ իրադրության մեջ դիմացինդ պիտի քեզ գոնե հասկանա: Եթե ոչ համաձայնի, ազդվի կամ տոգորվի՝ գոնե հասկանա, որպես հաղորդակցության նախնական և ամենահիմնային փուլ:

Հենց դրա համար եմ ներկայացնում հաջորդիվ խորհուրդները, կամ

այն, ինչ անվանում են «բութ մատի կանոն» (rule of thumb):

Գիտությունը, իհարկե, ոչ ոք հաշվից դեն չի նետում: **Կոնստրուկտիվ կոմունիկացիայի լավագույն ձևը ժամանակակից գիտության ստույգ տվյալների վրա հենվելն է:** Եվ կամ՝ գիտական մեթոդիկաներով հետազոտություններ անելն ու հասնելն այնպիսի արդյունքների, որոնք կոչվում են **«ակնհայտության վրա հիմնված»** (evidence-based), **այսինքն որոնք հիմնված են հստակ մեթոդներով արվող փորձերի վրա, կրկնվելու ունակ են (արդյունքները կախված չեն դրսի հանգամանքներից կամ անողից) և այլն[26]:**

Ուշադրություն դարձրեք, որ մեդիայի էթիկայի և որակյալ լրատվության կանոնները շատ կարևոր հարաբերության մեջ են գտնվում գիտական էթիկայի կանոնների հետ, երկուսը միմյանց փոխլրացնում են և միմյանց հետ երկխոսում: Օրինակ՝ փորձը կրկնելու արդյունքում նույն արդյունք ստանալու պահանջը երկխոսում է ժուռնալիստիկայում՝ երկու կամ ավելի աղբյուրից ինֆորմացիա ստանալու պահանջին, որի կատարյալ տարբերակը կլիներ, եթե երկուսն էլ նույնն ասեին կատարվածի վերաբերյալ, սակայն եթե նույնիսկ նույնը չեն ասում՝ նրանց դիսկուրսների տիրույթը թույլ է տալիս որոշակի հետևություններ անել այն «ակնհայտ» (թեև ոչ լրիվ հայտնի) «օբյեկտիվ» փաստի վերաբերյալ, որը տեղի է ունեցել:

Մյուս կողմից, հաճախ մենք հնարավորություն չունենք հենվելու միայն գիտական տվյալների վրա: Ի՞նչ անել այդ դեպքում:

**Ասելիքը (կամ գրելիքը) դարձնել փաստարկված՝ արգումենտացված (լեզվի ու տրամաբանության տեսակետից), ինչպես նաև փաստերով հարուստ և հղումներով:** Չէ՞ որ **մեր նպատակն է՝ հավաստի տեղեկություն հաղորդել, և եթե նույնիսկ դա վերջնական ճշմարտություն չէ՝ ապա համոզել, որ մեր կարծիքը լեգիտիմ է: Այսինքն՝ որքան կարելի է ավելի լեգիտիմ, վստահելի դարձնել մեր ասելիքը (գրելիքը):**

Դրանից բացի՝ խորհուրդ եմ տալիս օգտագործել հետևյալ հնարները.

- **Խուսափել լեզվական կարծրատիպերից**. այսօր աշխարհը ողողված

26 Գիտությունը նվիրված է «մարդուց անկախ» օրենքներ և օրինաչափություններ հայտնաբերելուն, կամ մարդուց դրանց կախվածության «օբյեկտիվ» աստիճանը հայտնաբերելուն. տես օրենքների մասին այստեղ. http://gtergab.com/ru/news/essay/what-is-rationality/95/

է լեզվական կարծրատիպերով: Դրանք որոշակի ազդեցություն ունեն ընկալման վրա. ա) դարձնում են ընկալումն ավելի դժվար, քանի որ ուղեղը՝ սովոր այդ բառակապակցությանը՝ «պլստում է» ասվածի իմաստի վրայով, բ) անհարկի օգտագործվում են որպես ապացույց, որ խոսողը պատկանում է «ընդունված մեծամասնությանը» («մեյնսթրիմին»), քանի որ օգտագործում է տվյալ ասպարեզի «մեծամասնության» (իբր) կողմից ընդունված կարծրատիպ, և այդպիսով փորձում են ազդել հաղորդագրության հավաստիության վրա, այն ավելացնելով, գ) նույնը՝ որ ասելիքն «ընդունված բան է», քանի որ արտահայտված է «մեյնսթրիմ» միջոցներով, ուրեմն՝ հավանական է, որ ճիշտ է, դ) անհարկի արտահայտում են այն սպասումը, որ, քանի որ, խոսողի կարծիքով, կարծրատիպի իմաստը «նույնն է բոլորի համար», ուրեմն և՝ ընկալողի համար պիտի լինի նույնը՝ ուրեմն ընկալողը ստիպված է այն ընդունել նույն իմաստով, որով այն ասված է, և հասկանալ նույն իմաստով (և եթե վերջինս այդպես չի վարվում, կարող է հանդիպել անարդար վերաբերմունքի), ե) վերջապես՝ իրոք թաքցնում են անիմաստությունն արտաքուստ իմաստավոր տեքստի տակ:

Օրինակ՝ երբ որևէ մեկը կիսում է իր գործունեության պատմությունը, հաճախ, մեր՝ հասարակական կազմակերպությունների՝ ՀԿ-ների աշխարհում և կամ միջազգային զարգացման ասպարեզում ընդհանրապես, դա անքննադատորեն անվանում են «հաջողության պատմություն», մինչդեռ դա կարող է այդպիսին չլինել, այլ լինել՝ մաքառման կամ էլ պարզապես անհաջողության պատմություն, կամ մի պատմություն, որտեղ կա այդ ամենը և շատ ավելին, և որից կարելի է դասեր քաղել:

Երբ խոսքային կարծրատիպը քանդում ես և նոր բառեր փնտրում միտքն արտահայտելու համար, միտքդ ճշգրտվում է, սխալանքի տոկոսը՝ «պլստան» կարծրատիպի ու մտքիդ միջև, անհետանում է, միտքդ դառնում է ճշգրիտ, և անգամ դու ինքդ կարող ես հայտնաբերել, թե որքան կարևոր է արտահայտածդ միտքը: Դա օգնում է, որ հաղորդակցվողը հարգի միտքը, ուշադրություն դարձնի դրա վրա, կենտրոնանա, գնահատի ասելիքը և այլն: Տե՛ս բառարանում նաև «կլիշեի սխալի» մասին հոդվածը:

- Ճիշտ տեղերում օգտագործել **«հակապնդումները»** (disclaimers). «իմ կարծիքով», «որքան գիտեմ» և այլն:

- **Խուսափել անտեղի «քվանտորային» և «բացարձակային» հասկացություններից**. «միշտ», «երբեք», «բոլոր» և այլն: Փոխարենը գործածել ավելի «ոչ բացարձակ» սահմանափակիչներ՝ «իմ կարծիքով՝ հաճախ», իսկ եթե չգիտենք՝ հաճախ, թե երբեմն, ապա կարելի է ասել. «կան դեպքեր» կամ «ինձ հանդիպած շատ դեպքերում», և այլն:
- **Խուսափել,** իհարկե**, անհարկի ընդհանրացումներից** (որոնք հաճախ քվանտորներ էլ են ունենում), ասենք՝ «բոլոր գերմանացիները ճշտապահ են» և այլն[27]: Սա հատկապես կարևոր է ազգությունների, գենդերների, ռասաների, կրոնական ուղղությունների և նման՝ ինքնության առաջնային եզրերին վերաբերող հասկացությունների հետ գործողություններ կատարելիս, այն բոլոր դեպքերի, որոնք մտնում են «խտրականություն» հասկացության տիրույթը[28]: Շատ իմաստներով «քաղաքական կոռեկտության»[29] ողջ էթիկան և ծեսը հիմնված է հենց այս հասկացությունները ճշգրիտ և տեղին օգտագործելու պահանջի վրա:
- **Ասելիքը (գրելիքը) կառուցել այնպես, որ սկզբում (գերադասելի է) գա ընդհանրացված միտքը**. «Եոխորհրդային հասարակություններում կոռուպցիոն դրսևորումների մշակութային որոշ առանձնահատկություններ կարելի է տեսնել ձևավորված դեռևս Խորհրդային Միության ժամանակներում», որից հետո անպայման գա օրինակ՝ մեկ կամ մի քանի. «Օրինակ՝ հակումը դեպ անորակ աշխատանք կարելի է սերել դեռևս գուլագային մշակույթից եկող «տուֆտա[30]» հասկացությունից»...

Նկատենք, որ **«ընդհանրացում-կոնկրետ օրինակ» կապակցությունը խոսքի լեգիտիմության ու ռելևանտության լավագույն «ամրապնդիչներից» է**: Եթե օրինակ չեք կարողանում գտնել, շատ հավանական է, որ ձեր ընդհանրացման փորձը նույնպես սխալ է: Երբ օրինակը գտնում եք, ընդհանրացման ձևակերպումը կարող է խմբագրվել, որպեսզի էլ ավելի լավ ծառայի որպես տվյալ օրինակի

27 Տես այս մասին մի ամբողջ ենթաբաժին «բառարանում»:

28 Տես այդ մասին «Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ». http://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

29 Տես https://en.wikipedia.org/wiki/Political_correctness

30 Տես այստեղ. Что такое туфта՝ http://i-fakt.ruhttp://i-fakt.ru/chto-takoe-tufta/

ու մնացյալ բոլոր բաց թողնված օրինակների առավել ընդհանուր ամբողջացման լեգիտիմ թեզ:

Ընդհանրացման և օրինակի հարաբերությունը չափազանց կարևոր է: Լավ օրինակը թույլ է տալիս մեջբերել առավել «դժվար» կամ «բարդ» թվացող ընդհանրացում: Օրինակի և ընդհանրացման միջև եղած «մկրատը»՝ նույնիսկ ինչ-որ պահի նրանց միմյանց որոշ չափով «հակասելը», նրանց՝ բարդ կերպով միմյանց փոխլրացնելը (որովհետև ոչ մի կոնկրետություն երբևէ լրիվ չի կարող համընկնել որևէ ընդհանրության) ստեղծում է, այսպես ասած, ընկալման խորք, ասես նրանք երկու եզր լինեն մի անոթի: Ու որքան միմյանցից հեռու են (թեև չեն բացառում մեկը մյուսին)՝ այնքան անոթը տարողունակ է, այսինքն՝ այնքան ավելի խորքային միտք կարող է արտահայտել նրանց միասնությունը, և այդ միտքն ընկալելի կլինի, չնայած իր բարդությանն ու տարողունակությանը:

Դա թույլ է տալիս նաև խաղարկել դրույթի մասերի ոճերը. օրինակը հաճախ կյանքից է, կենցաղային, ընդհանրացումը՝ տեսական, աբստրակտ հասկացություններից կազմված: Եվ ոճերի այդ հակադրում/համադրումը, թվացյալ «էկլեկտիզմը» թույլ է տալիս լսողին արագ յուրացնել ավելի շատ ու ավելի խոր ասելիք, քան այլ դեպքում. չէ՞ որ **ցցուն (սակայն հեռվում փոխկապակցված) տարբերությունները մեր հոգեբանության համար ավելի հեշտ ու արագ ընկալելի են, մարսելի, քան լրիվ անկապ կամ իրար շատ մոտ կանգնած երկու բան, «համահարթն» ընկալելն ավելի դժվար է**, այն, ասես «սանս սերիֆ» տառատեսակ, դուրս է պլստում մեր ուշադրությունից, քանի որ «սերիֆներ»՝ «պատառաքաղիկներ»-կեռիկներ չկան կամ քիչ կան, որ մեր ուշադրությունը դրանցից կառչի, փոքր-ինչ դանդաղի ու հիշի ու հասկանա ասելիքը:

Օրինակից հետո ընդհանրացում բերելը նույնպես վատ չէ, սակայն ավելի թույլ կիրառուկ է: Բանն այն է, որ հակառակը՝ «դեդուկտիվ» մոտեցումը ստեղծում է հետևյալ հոգեբանական էֆեկտը. լսողը սովորաբար ինքնին տրամադրված չէ վստահել ընդհանրացումներին: Եվ երբ լսում է ընդհանրացումը՝ հաճախ իր առաջին, նույնիսկ ենթագիտակցական ռեակցիան կասկածն է (որը կարող է նույնիսկ արտահայտվել որպես պարզապես «ականջի ետևը գցել», կարևորություն չտալ): Մինչդեռ դրան հետևող օրինակը, եթե լավն է ու անսպասելի՝ ստեղծում է «ահա»-յի էֆեկտ. այսինքն լսողը հանկարծ հասկանում է, որ

նախորդ ընդհանրացումը շատ համոզիչ է կապվում տվյալ օրինակի հետ. սկսում է, թեկուզ անգիտակցաբար, իր սեփական օրինակները փնտրել, իր կյանքի հետ համեմատել բերված օրինակը. իսկ սա իր հերթին ավելացնում է ասելիքի հավաստիությունը:

Օրինակից առաջ ընդհանրացում բերելու մյուս պատճառաբանությունը հետևյալն է. **մեծ կոնտեքստով շրջակայքը տեսնելը՝ ասես «թռչնի բարձրությունից», իշխանավորում է մարդուն, քանի որ տալիս է համայնապատկեր ու նաև թույլ է տալիս նկատել, որ «անկյան ետևում» սպասող դավադրություններ չկան: Եթե մարդը կոնտեքստը տեսել է, նրանից տեղյակ է՝ ավելի հեշտ կկողմնորոշվի նրա որոշակի մասում:** Նույն կերպ՝ եթե թաղամասը (և/կամ դրա քարտեզը) լավ գիտի ու ընդհանուր գծերով պատկերացնում է, կողմնորոշվում՝ իր ճանապարհը հեշտությամբ կգտնի ոլորապտույտ փողոցների մեջ, իսկ եթե ոչ՝ կկորչի:

**Ընդհանրացումն ահա այդպիսի մեծ կոնտեքստի հիմնադրման մոդել է, որն ասում է. «վստահ եղիր, դու այժմ ընդհանուր պատկերը գիտես»: Այն նաև, ինչպես ասացի, ծնում է մարդու երևակայության մեջ, գիտակցորեն թե անգիտակցորեն, սեփական օրինակները տարբեր կոնկրետ դեպքերի, որոնք այդ ընդհանրացմանն են վերաբերում, նրան համապատասխանում կամ հակասում:**

Ընդհանրացումից հետո կոնկրետ օրինակը երբ գալիս է՝ մարդ ավելի հեշտությամբ է այն համեմատում ընդհանրացման հետ, ստուգում նրա պատկանելությունը հենց տվյա՛լ ընդհանրացմանը, վերլուծում, արդյոք հակասություն չկա՞, դասավորում այն իր սեփական, երևակայած, գիտակից թե անգիտակից, ակտուալ թե պոտենցիալ օրինակների շարքում, գտնում դրա տեղը... Ինչն իր հերթին՝ մեծացնում է ողջ հաղորդագրության լեգիտիմությունը, հիմք տալով մարդուն համաձայնել կամ ոչ՝ ավելի փաստարկված հիմքով, քան այլապես:

Ահա այսպիսի պարզ միջոցները, ի թիվս այլոց (որոնք այստեղ բաց եմ թողնում, քանի որ սա զուտ անհրաժեշտ ներածություն է), եթե օգտագործվեն համակարգված ձևով (**արժեք** և **նպատակ**, **կառուցողական կոմունիկացիա**, **ինքնատիրապետում** և այլն գումարած՝ **ընդհանրացում-օրինակ**, **խուսափել անհարկի ընդհանրացումից**, **օգտագործել հակապնդում** և այլն) և, իհարկե, «ճիշտ» չափով հաշվարկված (և այդ «չափի» մի մասն էլ այն է, որ հաճախ արժի լռել ու

չշտապել արտահայտվել), ու եթե զուգակցվեն ստորև բերված սխալներից խուսափելուն՝ կօգնեն ձեր ասելիքն ու տեքստը դարձնել լեգիտիմ ու վստահելի:

- Եվս մեկ խորհուրդ. վերը ես փակագծի մեջ նշում եմ **լռելը**: Խոսել չշտապելը շատ կարևոր է՝ մտածված խոսք ձևակերպելու համար, որպեսզի ձեր խոսքը կամ տեքստը չլինի պատահական: Այդ մոտեցումը ես անվանում եմ «**երկրորդ մտածողություն**»[31], այն կարելի է անվանել նաև «**խմբագրում**» և այլն. բանավոր խոսքը չես հասցնում խմբագրել, գրավորը կարելի է, դրա համար այն հրապարակելուց կամ ուղակելուց առաջ արժի ստուգել, գուցեև մի քանի անգամ, իսկ **բանավորը կարելի է սովորել այնպե՛ս արտահայտել, որ չափսոսես հետո ասածիդ համար**, եթե նախապես պատրաստվել ես խոսելուն և վարժվել հաճախ բանավոր հրապարակային խոսելուն:

- Սակայն կա նաև այս մոտեցման գրեթե հակառակ նկատառումը. **քանի որ ամեն վայրկյան մեզ տրված է միայն մեկ անգամ՝ արժի ամեն առիթով, երբ պետք է կոմունիկացվել, ասել այդ պահի համար ամենակարևորը. այն, ինչը մարդ համարում է, որ ամենակարևորն է: Պատահական կամ դատարկ խոսքն արժեք չունի, և այն նաև ազդում է իր շրջապատի վրա, ու դատարկ խոսքերով շրջապատված կարևոր խոսքը՝ «գայլը» գոռացող մարդու մասին առակին ճիշտ համաձայն, կորցնում է իր ազդեցությունը նույնպես:** Ուրեմն՝ ծանրակշիռ խոսք ասա, կամ պարզապես՝ ամեն հնարավոր առիթից օգտվիր ասելու համար տվյալ պահի համար ամենակարևորը:

Ես այդ խորհուրդն ինքս շատ եմ օգտագործում, և նույնիսկ գրեթե աբսուրդի աստիճան հասցնելով. օրինակ, երբ ժուռնալիստներն ինձ հարց են տալիս, որն ինձ հետաքրքիր չէ (եթե այն սովորաբար իրոք ոչ հետաքրքիր հարց է լինում, այլապես ես, իհարկե, ժուռնալիստի գործը չեմ խաթարի), ես այն «շուռ եմ տալիս», վերաձևակերպում որպես ինձ հետաքրքրող որևէ կարևոր հարց և պատասխանում հենց այդ՝ իմ ձևակերպած հարցին: Ժամանակ չկորցնել. ասել այն ամենակարևորը, որ պիտի ասվի տվյալ հանգամանքներում. այս կիրառուկը՝ զուգակցված մնացած նշածներիս հետ, նույնպես օգնում է ասելիքի հանդեպ

31 Տե՛ս այստեղ. Պրոտոկոլ երկրորդ մտածողության. http://www.gtergab.com/hy/news/projects/protocol-second-thinking/115/

վստահության և ասելիքի լեգիտիմության բարձրացմանը:

Այս խորհուրդն էլ, բացի կյանքի անկառավարելի հոսքը չզոհաբերելու, ժամանակ չկորցնելու կարիքից, ունի այլ խորքային արժեքային և փիլիսոփայական հիմնավորում:

Կարճ՝ նշեմ դրա ուղղությունը. **կոմունիկացիան արվում է ոչ միայն խոսքով, այլև այն ողջ համատեքստով և խորապատկերով, որ շրջապատում է բուն լեզվական-խոսքային մասը:** Եթե մարդը, օրինակ, երևում է՝ նա հաղորդում է հազար ու մի տեսակի ինֆորմացիա, որը դիմացինն ընկալում է ոչ միայն ականջներով, այլև աչքերով և գուցե այլ զգայարաններով նույնպես (օրինակ՝ հոտը՝ զգալի կամ անզգալի, և այլն): Երբ մարդն իր համար տվյալ պահին ամենակարևորն է հաղորդում (և սակայն՝ կառուցողական, ոչ ներփակ էգոիստական, և՝ հետևելով վերն ասված կիրառուկներին)՝ նրա ողջ հաղորդման էֆեկտն ուժգնանում է. նրա արտաքին տեսքը գումարվում է նրա ասելիքին, և ամենի համոզչությունն ու նշանակալիությունն ուժգնանում է: Նույնն էլ գրավոր տեքստի դեպքում (կամ՝ ռադիոհաղորդման), և այս դեպքում խոսքը ոչ այնքան մարդու տեսանելիության մասին է (քանի որ գրավոր խոսքի հեղինակն այն ընթերցելու պահին մեծ մասամբ տեսանելի չէ), որքան՝ նրա մասին այն երևակայական պատկերի, որը ծնվում է հաղորդակցությունը ստացողի մեջ կամա թե ակամա:

Եվ եթե մարդն ինչ-որ բան ասելիս ասում է իր համար ամենակարևորը՝ իր ողջ էությունը, մարմինը, ամենը՝ ինչ երևում է կամ երևակայվում՝ միասնաբար ասում են նույն բանը. իսկ դրանից ասելիքի ներազդեցությունն ուժգնանում է: Ճիշտ ինչպես որ աչքերը երբ փախցնում են, համարվում է, որ սուտ են ասում կամ բան թաքցնում՝ նույն կերպ էլ, ենթագիտակցորեն կամ գիտակցորեն հաղորդագրություն ստացողը գնահատում է խոսողի ամեն հատկանիշ, որ կարող է տեսնել կամ պատկերացնել, և արդյունքում, եթե հակասություն չի գտնում, այլ միասնություն խոսողի խոսքի և վարքի այլ մանրամասների միջև՝ հակված է ավելի վստահելու, որ խոսողն ասելիս անարդար «իշխ» չի գործածում իր հանդեպ, կարճ ասած՝ խաբելու նպատակ չի դնում սույն ասելիքով:

- Այս ամենին կարևոր է ավելացնել, հիշեցնելով ևս մեկ արժեք կամ սկզբունք. **ինքնատիրապետումը կամ ինքնագիտակցումը** (self-awareness). պատկերացումն այն մասին՝ թե ինչպիսի

տպավորություն ես դու թողնում մյուսների վրա, երբ հաղորդակցվում ես. **ինքնախմբագրումն ու ինքնահետևելը**:

Այս հատկանիշը նման է երկրորդ մտածողությանը կամ խմբագրելու կարողությանը, սակայն՝ վերագրված իրեն՝ հաղորդագրությունն արձակողին, այսինքն՝ ինքնավերագրված: Իհարկե, մարդը չի կարող բավարար կերպով ինքն իրեն տեսնել «դրսից» և կատարելապես ինքնախմբագրվել: Առավել ևս գոնե մի քիչ դա կարողանալը՝ շատ կարևոր հատկություն է: Դա զարգացնելը, դաստիարակելը՝ բանալի է, մնացած կիրառուկների հետ միասին, կառուցողական հաղորդակցության համար: Խոսքը, իհարկե, գնում է ոչ թե սեփական «ինքն» արհեստականորեն ու շինծու կառուցելու մասին (դա դառնում է նույնպիսի խաբկանք, ինչպիսին մանիպուլյատիվ հաղորդագրությունն է), այլ ընդհակառակը՝ այն քիչ թե շատ ճանաչելու և մտածված նրա ինքնարտահայտումն օգտագործելու:

- Վերը նշված կետին նման է նաև «ռեֆերենտի երևակայում» կիրառուկը: Ճիշտ ինչպես որ ռեֆլեքսիոն մոտեցումը՝ սեփական անձին լավ տիրապետումը և հաղորդակցվողին պատկերացնելն են կարևոր՝ նույնքան կարևոր է նաև ասելիքիդ ռեֆերենտին[32] պատկերացնելը: Ընդհանրապես, երևակայությունը հսկայական դեր է կատարում ճիշտ հաղորդակցություն կառուցելու համար: Խորհուրդ է տրվում, ցանկացած թեմայով խոսելիս, ժամանակ ծախսել և երևակայել այն ռեֆերենտները, որոնք արտահայտվում են տվյալ հասկացություններով և տերմիններով: Ո՛չ միայն արժի կարծրատիպերից խուսափել, և նաև, նույն պատճառով, խուսափել այն տերմիններից, որոնք կարծրատիպային են սկսել օգտագործվել, և աշխատել դրանց համարժեք այլ հասկացություններ գտնել (որոնք կօգնեն միտքն ավելի լավ ձևակերպել). այլև՝ արժի շատ ընդհանրական հասկացություններ օգտագործելիս՝ երևակայել նրանց ռեֆերենտը: Ճիշտ ինչպես «ազգ»[33] հասկացությունը գիտականորեն դասվել է «երևակայված» հասկացությունների շարքը՝ նույն կերպ էլ շատ այլ հասկացություններ կան, որոնք ըն-

32 Տես այստեղ. Կոնֆլիկտների տրանսֆորմացիա. ներածական դասախոսություն (Jam Session 30). http://epfarmenia.am/hy/video/conflict-transformation-introduction

33 Տես այստեղ. Երևակայական հանրույթներ, ռասիզմ, ազգայնականություն և կոնստրուկտիվիզմ (Jam Session 12). http://epfarmenia.am/hy/video/imagined-communities-nations

դունվում են, անքննադատորեն, որպես կարծր, օբյեկտ, ասես՝ իր, մինչդեռ դրանք երևակայված հասկացություններ են[34]:

Կրկին օրինակ բերեմ իմ սեփական կյանքից. ճիշտ ինչպես որ «ազգ» բառը չարաշահված էր մեր հասարակությունում, նույն կերպ էլ՝ «ժողովուրդ» բառն էր չարաշահված: Հայտնի փիլիսոփա Ֆրեգեն նույնիսկ մի անգամ ասել է, որ «ժողովուրդը» հասկացություն է՝ առանց ռեֆերենտի: Այսինքն՝ թե ինչ է նշանակվում այդ նշանով, շատ անորոշ է: Սակայն ապրիլյան հեղափոխության օրերին ես, լսելով Նիկոլ Փաշինյանի կոչերը դեպ ժողովուրդը և ժողովրդի արձագանքը՝ առաջին անգամ կարողացա երևակայել նրա ռեֆերենտը, տարբեր՝ ազգից էլ, հասարակությունից էլ:

Այդպես՝ որոշակի իրադրություններում հին ու մաշված, ծեծված հասկացությունները թարմանում են և ձեռք են բերում նոր իմաստ, սակայն դրանց չարաշահելը, միևնույն է, վտանգավոր է: Դա նաև կապված է նրա հետ, որ այդպիսի հասկացությունների չափից դուրս շատ օգտագործումը ոչ միայն չարաշահում է ինքնին, այլև՝ հաճախ, ավաղ, օգտագործվում է հենց անարդար իշխի խնդիրները լուծելու համար, այսինքն՝ հասարակության անդամների ուշադրությունը կարևոր խնդիրներից շեղելու համար, ինչպես, օրինակ, մինչև վերջերս տեղի էր ունենում «ազգ-բանակ» հասկացության կապակցությամբ:

Ընդհանրացնելով վերն ասվածը, առաջարկում եմ **տեքստի քննման մոտավոր օրինակելի պլան**.

- Քննեք տեքստի պրագմատիկան. ինչ նպատակով է այն ասվում, ո՞րն է, նրանով արտահայտված, իշխի թաքուն կամ բացահայտ նպատակը. որ լսողն ինչ հասկանա, զգա, իմանա, կարծի, - և ասողին դրանից ինչ օգուտ.
- Ի՞նչ ռեֆերենտ կա ասածի մեջ. արդյոք կա՞ ակնառու ռեֆերենտ, թե՞ զուտ երևակայված, կարծրատիպային և այլն.
- Ի՞նչ հարաբերության մեջ է գտնվում ասողի արժեքային համակարգը ձեր՝ լսողի արժեքային համակարգի հետ (ձերը պիտի հիմնված լինի վերը բերված արժեքային համակարգի վրա). արդյո՞ք նույնն է, հակասում է, և այլն.

34 Տե՛ս այստեղ. Արխայիկ մտածողություն. Մաս 2 (Jam Session 33). http://epfarmenia.am/hy/video/Archaic-thinking-part2

- Եթե քննումը ցույց տվեց, որ կոմունիկացիան ունի կոոպերատիվի-կոնստրուկտիվի հատկանիշներ, ապա արդյո՞ք համապատասխանում է այն ճշմարտության չափանիշներին, թե՞ սխալ է ամբողջությամբ կամ մասամբ (բոնա ֆիդե սխալ): Ինչու՞մն է սխալը, ի՞նչն է ցույց տալիս, որ այն (մասամբ) սխալ է: Ինչո՞վ բացատրել այդ սխալը: Ո՞րը կլիներ ճիշտը.
- Եթե կասկած կա, որ տեքստը հիմնված չէ կոոպերատիվ-կոնստրուկտիվ տեքստի հատկանիշների վրա, ապա ո՞րն է ձեր՝ որպես լսողի, ճիշտ հաջորդ քայլը: Ի՞նչ հետևություններ անել. հակաճառել, լռել, ուղղել, վիճել, մոռանալ, քննադատել, ներկայացնել ուրիշներին որպես մանիպուլյատիվ կոմունիկացիայի օրինակ, օգտագործել հետազոտության համար և այլն:

**Նույն մոտեցումը պիտի դրսևորվի նաև սեփական խոսքի նկատմամբ:**

Վերը բերված խորհուրդները կամ կիրառուկները կարող են բավական տարօրինակ թվալ նեղ մեդիա մասնագետներին, ոչ առաջնային, ոչ կարևոր և նույնիսկ՝ երբեմն հակասող նրան, թե ի՞նչ են իրենք սովորել: Դրանք, օրինակ, ընդգծում են հեղինակին, փոխանակ նրան մղեն ետին պլան, պահանջում «վայրիվերող» ոճ, փոխանակ՝ համահավասար, և այլն: **Մեր կրթական համակարգերի խնդիրներից մեկն էլ հենց այն է, որ մարդկանց սովորեցնում են արհեստը՝ «փեշակը», առանց քննարկելու ավելի նախնական ու հիմքային սկզբունքները, արժեքները: Ճիշտ ինչպես որ քննադատական մտածողությունն ավելի տարողունակ հասկացություն է, քան մեդիագրագիտությունը (թեև վերջինս էլ ունի մասեր, որոնք դուրս են մնում առաջինի տիրույթից), ճիշտ ինչպես որ «իշխ ճառագելն» ավելի առաջնային գործողություն է, քան «պարզապես» «ինֆորմացիա հաղորդելը»՝ նույն կերպ էլ կոմունիկացիոն վարքի վերը բերած սկզբունքներն ավելի առաջնային են, քան սովորաբար քաջալերվող նեղ մասնագիտական մեդիա վարքագծերինը (որոնք բխում և ծնվում են հենց վերը բերված սկզբունքներից):**

Այս սկզբունքներին լավ է ոչ թե պարզապես տեղյակ լինել, այլ դրանց տիրապետել, և դրանից հետո՛ միայն հետևել նեղ մասնագիտական մեդիա վարքագծերին, թելադրված՝ և՛ մեդիա տարատեսակ մասնագիտությունների, և՛ տվյալ մեդիայի առանձնահատկությունների կողմից:

Ստորև՝ տե՛ս ասելիքի հանդեպ վստահությունը և նրա լեգիտիմությունը՝ ընդհակառակը, խաթարող կիրառուկների, միջոցների, մեթոդների բառարանը:

Որպեսզի այն զուտ ընթերցանություն չլինի՝ այն նաև դասագիրք է. մենք քաջալերում ենք ընթերցողին սեփական օրինակները բերել և նույնիսկ դրանք մեզ ուղարկել: Լավագույն դեպքերը, եթե որևէ ընթերցող տասը կամ ավելի համոզիչ օրինակ ուղարկեց տրամաբանական ու հռետորաբանական տարբեր կիրառուկների, որոնք ձևակերպված են ստորև՝ մենք շնորհակալ կերպով կօգտագործենք մեր դպրոցներում, այլ նյութերում, հեղինակին էլ կնշենք, իմաց կտանք մեր կարծիքը դրանց մասին, և նրա հետ կհամագործակցենք:

*Մարտի 30-հուլիսի 8, 2018, Երևան*

# ԲԱՌԱՐԱՆ

Օրիգինալ նյութի հղումը՝ Wikipedia the free encyclopedia, List of fallacies

Նյութի թարգմանությունը՝ Քրիստինե Սողիկյանի

Թարգմանության ավարտը՝ մարտի 20, 2018

*Խմբագրում և լրացումներ՝ Գևորգ Տեր-Գաբրիելյան*

**Ծանոթություն.** *Եթե հանդիպում եք հարցերի և որոշում եք դրանց գրավոր պատասխանել, խնամքով գրեք հարցն ու պատասխանը և ուղարկեք մեզ հետևյալ հասցեով. info-epf@epfound.am: Ամենանշանակալի պատասխանների հեղինակների հետ կկապվենք հավելյալ առիթներով:*

## Տրամաբական սխալ

Տրամաբանական սխալը տրամաբանության և հռետորաբանության մեջ ոչ ճշմարիտ փաստարկումն է, որը խաթարում է փաստարկի տրամաբանական վավերությունը կամ ավելի ընդհանրական մակարդակում՝ փաստարկի կուռ տրամաբանական կառուցվածքը: Տրամաբանական սխալները լինում են ֆորմալ կամ ոչ ֆորմալ: Սրանք մարդկանց համոզելու ժամանակ փաստարկումներում սովորաբար գործածվող ոճական միջոցներ են, որոնց նպատակն է հաղորդակցությունն ինքնին և դրա արդյունքները, ո՛չ թե տրամաբանության ճշգրտությունը, և կարող են կիրառվել անկախ առաջադրվող մտքի ճշմարիտ կամ ոչ ճշմարիտ լինելուց:

## 1. <u>Ֆորմալ տրամաբանական սխալներ</u>

**Ծանոթություն**. *Այստեղ նկարագրվում են նախ և առաջ այն տրամաբանական սխալները, որոնք հաճախ են հանդիպում տեքստերում և կարող են օգտագործվել ապակողմնորոշման համար: Բաց են թողնված նաև ամենապարզ դեպքերը:*

Ֆորմալ տրամաբանական սխալը տրամաբանության մեջ առկա սխալն է, որը տեսանելի է փաստարկի ձևում: Փաստարկի ձևը տրամաբանական պնդման այն կառուցվածքն է, որի բովանդակային փոփոխության դեպքում, թվում է, նրա ճշմարտության աստիճանը չի փոփոխվում: Օրինակ՝ բոլոր Ա-երը Բ են: Տվյալ իրը Ա է: Հետևաբար՝ այն

Բ է: Ֆորմալ տրամաբանական սխալները հաճախ դժվար ըմբռնելի են և պահանջում են երբեմն հաշվարկներ: Սակայն դրանց էությունը հասկանալը հեշտ է: Եթե դժվարություն ունենաք ներքոբերյալ դեպքերն ու օրինակները հասկանալ, հետևեք տրված հղումներին, և անգլերեն կգտնեք շատ ավելի մանրամասն բացատրություններ:

- Տրամաբանական սխալի վրա հիմնված փաստարկ. հայտնի է նաև որպես **տրամաբանական սխալով տրամաբանական սխալ**, և ենթադրում է, որ եթե որևէ մտահանգման համար *փաստարկումը* տրամաբանորեն սխալ է, ապա *մտահանգումն* էլ ճշմարիտ չէ: Օրինակ՝ Բոլոր կարապները սպիտակ են: Սույն թռչունը կարապ է: Ուրեմն՝ այն սպիտակ է: Այն փաստը, որ առաջին պնդումը ճշմարիտ չէ, չի նշանակում, որ հետևությունը նույնպես ճշմարիտ չէ: Հետևության ճշմարիտ լինելը հնարավոր չէ պարզել, հենվելով ճիշտ կամ սխալ նախադրույթին. դրա համար պետք է իրականության հետազոտություն. արդյոք սպիտա՞կ է, թե ոչ տվյալ կոնկրետ կարապը: Եթե, սակայն, նախադրույթը ճշմարիտ է և պնդումը կառուցված է ճիշտ ըստ ֆորմալ տրամաբանության կանոնների, մեծ մասամբ, բացի հատուկ դեպքերից, հետևությունը կլինի ճշմարիտ: Օրինակ՝ բոլոր բարդիները ծառ են: Տվյալ բույսը բարդի է: Ուրեմն՝ այն ծառ է:
- Կոնյունկցիայի (միավորման) սխալ. ենթադրվում է, որ բազմակի պայմանների միաժամանակ բավարարող արդյունքը ավելի հավանական է, քան դրանցից յուրաքանչյուրին բավարարող արդյունքը: Օրինակ՝ օֆիսում գողություն է կատարվել աշխատակիցներից մեկի կողմից: Կա մի աշխատակից՝ որբ, պատանի, աղքատ ու անդաստիարակ: Թվում է, թե ամենահավանականն այն է, որ նա է կատարել գողությունը: Մինչդեռ դրա հավանականությունն իրականում չի տարբերվում ցանկացած այլ աշխատողի մեղավորության հավանականությունից, եթե այլ փաստարկներ (ալիբի և այլն) չկան:
- Դիմակով մարդու սխալը (կոչվում է նաև գիտելիքի կամ էպիստեմիկ սխալ, կամ մտադրույթի սխալ). նույնական նշանակիչների անիմաստ օգտագործումը ճշմարիտ ասույթում կարող է հանգեցնել ոչ ճշմարիտ ասույթի: Օրինակ՝ Ես ճանաչում եմ Արմենին: Ես չեմ ճանաչում դիմակով մարդուն: Ուրեմն՝ դիմակով մարդն Արմենը չէ: (Մինչդեռ գուցե դա Արմենն է,

պարզապես ես չճանաչեցի նրան, քանի որ նա դիմակով է)։ Նույնպիսի սխալ արվում է, երբ տրամաբանական կառույցների ցանկացած մաս օգտագործվում է սխալ, առանց մտածելու։ Օրինակ՝ եթե վերը բերված օրինակի պրեդիկատների տեղերը փոխենք. Ամեն ծառ բարդի է... Եվ այլն։

## Պրոպոզիցիոն տրամաբանական սխալներ

Պրոպոզիցիոն սխալը տրամաբանական այնպիսի սխալ է, որը վերաբերում է բարդ պրոպոզիցիաներին (պնդումներին)։ Որպեսզի բարդ պրոպոզիցիան ճշմարիտ լինի, դրա բաղադրիչների ճշմարտացիության արժեքները պիտի բավարարեն դրանում հանդիպող համապատասխան տրամանաբանական կապերին/կապակցող մասնիկներին (առավել հաճախ օգտագործվում են «և», «կամ», «չ», «միայն եթե», «միայն ու միայն եթե»)։ Հետևյալ տրամաբանական կապերը ենթադրում են այնպիսի մտահանգումներ, որոնց ճշմարտացիությունը չի երաշխավորվում այս տրամաբանական կապերի/կապակցող մասիկների դրսևորած վարքով, և հետևաբար, չկա տրամաբանական երաշխիք, որ արդյունքում կստացվեն ճշմարիտ եզրահանգումներ։

Պրոպոզիցիոն տրամաբանական սխալների տեսակներն են.

- Բաժանարար (դիսյունկտիվ) անդամի հաստատում. մտահանգում առ այն, որ տրամաբանական դիսյունկցիայի բաժանարար (դիսյունկտիվ) անդամներից մեկը պետք է որ ճշմարիտ չլինի, որովհետև մյուս բաժանարար (դիսյունկտիվ) անդամը ճշմարիտ է. *A կամ B; A, հետևաբար՝ ոչ B*։ Եթե ֆորմալ տրամաբանության մեջ սա օրենք է, որոշակի (տեսական) պատճառներով[35], ապա այլ դեպքերում սա պարտադիր չէ[36]։
- Արդյունքի հաստատում– հարաբերության առաջին անդամը պայմանական մտահանգման մեջ համարվում է ճշմարիտ, որովհետև արդյունքը ճշմարիտ է. *Եթե A, ապա B; B, հետևաբար A։*
- Հարաբերության առաջին անդամի հերքում – պայմանական

35 Կարո՞ղ եք արդյոք մեկնաբանել, ինչու է ֆորմալ տրամաբանության մեջ դիսյունկցիայի անդամներից մեկի սխալ լինելն օրենք։ Ի՞նչ արգումենտներ և պայմաններ են պետք, որ դա միշտ լինի այդպես ու համարվի տրամաբանական օրենք։

36 Խնդրեմ բերեք օրինակ, որտեղ սա պարտադիր չէ։ Ինչու՞ է այդպես, ի՞նչն է խախտվում այս (կենսական) օրինակում ֆորմալ օրինակի համեմատ։

մտահանգման արդյունքը համարվում է ոչ ճշմարիտ, որովհետև հարաբերության առաջին անդամը ճշմարիտ չէ. *եթե A, ապա B; ոչ A, հետևաբար ոչ B*:

## Քվանտորային տրամաբանական սխալներ

Քվանտորային տրամաբանական սխալն այնպիսի սխալ է, երբ նախադրյալների քվանտորները հակասում են մտահանգման քվանտորներին:

- Քվանտորային[37] տրամաբանական սխալներն են.
- Գոյության (էկզիստենցիալ) տրամաբանական սխալ– փաստարկում, որն ունի համընդհանուր տրամաբանականորեն ճշմարիտ նախադրյալ, սակայն մասնավոր (գոյաբանական) մտահանգում, կամ որի մտահանգումը նրանում է, որ այն կատարում է «գոյաբանական էքսպորտ»: Գոյաբանական էքսպորտ է այն իրադրությունը, երբ որևէ հասկացություն համարվում է իրականում գոյություն ունեցող: Օրինակ՝ բոլոր կենտավրոսները մարդու և ձիու միավորում են: Այս դրույթը տրամաբանորեն և գոյաբանորեն ճիշտ է (գոյաբանորեն՝ քանի որ ինչ որ մենք գիտենք կենտավրոսների մասին՝ հուշում է, որ իրոք նրանք մարդու և ձիու միավորում են): Սակայն այս պնդման հիման վրա չի կարելի հետևություն անել, որ բոլոր կենտավրոսները գոյություն ունեն, կամ որ գոնե մեկ կենտավրոս գոյություն ունի: Ավելին. նման հետևության չի կարելի հանգել նույնիսկ չնայած նրան, որ մարդն էլ, ձին էլ իրոք գոյություն ունեն:

## Ֆորմալ սիլլոգիստական տրամաբանական սխալներ

Սիլլոգիստական տրամաբանական սխալներ – տրամաբանական սխալներ, որոնք տեղ են գտնում սիլլոգիզմներում:

- Ժխտական նախադրյալից բխող հաստատական եզրակացություն (քողարկված ժխտական)՝ երբ կատեգորիկ սիլլոգիզմն ունի հաստատական եզրակացություն, բայց առնվազն մեկ ժխտական նախադրյալ: Օրինակ՝ ոչ մի ձուկը շուն չէ, և ոչ մի շուն չի կարող թռչել, հետևաբար՝ ձկները կարող են թռչել:
- Ժխտական նախադրյալների տրամաբանական սխալ. կատերգորիկ

37 Հիմնական քվանտորներն են. «բոլոր», «գոյություն ունի մեկ հատ», «ոչ մի»:

սիլլոգիզմ է, որն օրինական չէ, որովհետև դրա նախադրյալներից երկուսը ժխտական են: Այս, ինչպես և այլ դեպքերում, երբեմն հետևությունը կարող է նույնիսկ ճշմարտություն պարունակել: Սակայն, ի տարբերություն վերը բերված սխալ պատճառա-հետևանքային կապի օրինակի (բոլոր կարապները սպիտակ են, հետևաբար այս կարապը սպիտակ է, և այս վերջին դրույթը ճշմարիտ է) սիլլոգիզմի դեպքերում քանի որ ողջ տրամաբանական շղթան է սխալ, սիլլոգիզմը ճշմարիտ չի համարվում, նույնիսկ եթե իր վերջին դրույթը ճշմարիտ է: Օրինակ՝ Ոչ մի կատու շուն չէ: Որոշ շներ չեն ուտում կարտոֆիլ: Ուրեմն՝ որոշ կարտոֆիլ ուտող տնային կենդանիներ կատու չեն:

- Չորս տերմինների սխալ (quaternio terminorum). կատեգորիկ սիլլոգիզմ, որն ունի չորս տերմին: Ֆորմալ տրամաբանության մեջ սա այն դեպքն է, երբ սիլլոգիզմի երեք պնդումների մեջ երեք տերմիններից բացի (տերմինը սիլլոգիզմի մեջ այն բովանդակային հասկացությունն է, որի վերաբերյալ կամ միջոցով կատարվում է դատողությունը) հայտնվում է չորրորդը: Օրինակ՝ բոլոր ծառերը բույս են (2 տերմին): Որոշ բույսեր կանաչ չեն (երրորդ տերմինը): Հետևաբար՝ մարդը կանաչ չէ (մտավ չորրորդ տերմինը, սիլլոգիզմը քանդվեց): Այս սխալը հաճախ է տեղի ունենում ոչ ֆորմալ տրամաբանության (տեքստերի) մեջ այն դեպքում, երբ որևէ հասկացության իմաստը փոխվում է սիլլոգիզմի մի պնդումից դեպ մյուս: Օրինակ՝ Գիշատիչները սնվում են մսով: Այս վաշխառուն գիշատիչ է: Հետևաբար՝ նա մսակեր է:

- Ոչ օրինական մեծ տերմին.կատեգորիկ սիլլոգիզմ, որն օրինական չէ, քանի որ դրա մեծ տերմինը բաշխված չէ մեծ նախադրյալում, այլ բաշխված է եզրակացության մեջ: Սա պարզ սխալի դեպք է, ինչպես, օրինակ՝ բոլոր շները շնչավոր են: Ոչ մի կատու շուն չէ: Ուրեմն՝ ոչ մի կատու շնչավոր չէ:

- Ոչ օրինական փոքր տերմին. կատեգորիկ սիլլոգիզմ, որն օրինական չէ, որովհետև դրա փոքր անդամը բաշխված է ոչ թե փոքր նախադրյալում, այլ եզրակացության մեջ: Խնդրեմ, ինքներդ բերեք օրինակ:

- Ժխտական եզրակացություն հաստատական նախադրյալներից (ոչ օրինական հաստատում). երբ կատեգորիկ սիլլոգիզմն ունի

ժխտական եզրակացություն, բայց հաստատական նախադրյալներ: Եթե ամեն Ա Բ է, իսկ ամեն Բ Գ է, ապա ամեն Ա չի կարող չլինել Գ: Խնդրեմ, ինքներդ բերեք էկզիստենցիալ օրինակներ:

- Միջին տերմինի չբաշխվածության սխալ. կատեգորիկ սիլլոգիզմի միջին տերմինը բաշխված չէ: Բոլոր Ա-երը Բ են: Գ-ն Բ է: Հետևաբար՝ Գ-ն Ա է: Խնդրեմ, ինքներդ բերեք օրինակներ:

### Բազային տոկոսաչափի սխալ

Հավանականության մասին դատողությունն է, որը հիմնված է պայմանական հավանականությունների վրա՝ առանց հաշվի առնելու ապրիորի հավանականությունների ազդեցությունը:

Այս սխալը հասկանալը պահանջում է հաշվարկներ: Նրա էությունը կայանում է նրանում, որ եթե, օրինակ, հայտնի է, որ տվյալ ազդանշանային սարքը զրնգում է, երբ հանդիպում է մետաղ կրող անձի, դեպքերի 99 տոկոսում, և միայն 1 տոկոսում սխալ թույլ տալիս, ապա թվում է, թե դեպքերի 99 տոկոսում եթե սարքը զրնգաց՝ ուրեմն անձը մետաղ է կրում: Մինչդեռ այս հաշվարկից դուրս է մնացել այն, որ տվյալ սարքը նաև զրնգում է մետաղ չկրող անձանց դեպքում՝ 1 տոկոս հավանականությամբ (և լուռ մնում, այսինքն ճիշտ գործում, դեպքերի 99 տոկոսում): Արդյունքում մետաղ կրող անձ հայտնաբերելու հավանականության իրական տոկոսը փոխվում է:

## 2. <u>Ոչ ֆորմալ տրամաբանական սխալներ</u>

**Ծանոթություն**. *Այն դեպքերում, երբ օրինակներ չկան, խորհուրդ է տրվում դրանք ինքնուրույն ձևակերպել կամ (ավելի օգտակար կլինի) հայտնաբերել տեքստերից:*

Ոչ ֆորմալ տրամաբանական սխալներն այնպիսի փաստարկումներն են, որոնք ճշմարիտ չեն ոչ կառուցվածքային (ոչ ֆորմալ) թերությունների պատճառով և սովորաբար պահանջում են փաստարկի բովանդակության քննություն:

- Փաստարկում առ հավանականություն. պնդում է, որի համաձայն ինչ-որ բան ընդունվում է որպես ինքնըստինքյան ենթադրվող, որովհետև դրա իրողություն դառնալը հավանական է (կամ կարող է հավանական լինել): Փաստարկումն առ հավանականություն այնպիսի պնդում է, որի շրջանակներում ինչ-որ մի բան համարվում է

ինքնըստինքյան հասկանալի կամ իրականանալի, որովհետև հավանական է, որ հենց այդպես էլ կլինի (կամ կարող է և այդպես լինել):

- Որպես անհեթեթ որակում (բառացի՝ «փաստարկում առ քար») (*argumentum ad lapidem*). պնդման հերքումը անհեթեթ լինելու հիմքով՝ առանց դրա անհեթեթության համար որևէ ապացույցի տրամադրման:
- Անիրազեկությանը միտված փաստարկում («փաստարկում առ անգիտություն», *argumentum ad ignorantiam*). ենթադրվում է, որ պնդումը ճշմարիտ է, որովհետև դրա ոչ ճշմարիտ լինելը չի ապացուցվել և չի կարող ապացուցվել, կամ ընդհակառակը: Օրինակ՝ Աստված գոյություն ունի:
- Անհավատությունից բխող փաստարկում («փաստարկում առ ողջախոհություն»). «Ես չեմ կարող պատկերացնել, թե ինչպես սա կարող է ճշմարիտ լինել, այս իսկ պատճառով դա պետք է որ ոչ ճշմարիտ լինի»:
- Կրկնությունից բխող փաստարկում (*argumentum ad nauseam*, *argumentum ad infinitum*). նշանակում է, որ այն այնքան հանգամանալից է քննարկվել, որ այլևս ոչ ոք չի ցանկանում այն էլի քննարկել. երբեմն այս սխալը շփոթում են հավաստիացման միջոցով ապացուցման սխալի հետ:
- Լռությունից բխող փաստարկում (*argumentum ex silentio*). երբ եզրակացությունը հիմնված է ապացույցների բացակայության, ոչ թե առկայության վրա: Օրինակ՝ Ոչ ոք այդպես էլ չհայտնաբերեց, թե ինչպես է իրականում աշխատում Ինը Իմաստունների Դավադրությունը (կանխադրույթն է՝ որ Ինը Իմաստունները գոյություն ունեն և դավադիր են): Այլ օրինակներ առաջարկեք ինքներդ:
- Փաստարկ հանուն չափավորության (կեղծ փոխզիջում, միջին դիրք, միջին դիրքի տրամաբանական սխալ, *argumentum ad temperantiam*). ենթադրում է, որ երկու դիրքորոշումների միջև փոխզիջման կետը միշտ ճշմարիտ է: Օրինակ՝ Հայերն ու ադրբեջանցիները պիտի բարիշեն՝ հավասարապես բաժանելով Լեռնային Ղարաբաղի տարածքը երկու երկրների միջև: Այլ օրինակներ մտածեք կամ գտեք ինքներդ:

Ստորև դեպքերի համար խնդրեմ ինքներդ մտածեք օրինակներ, եթե բացակայում են, կամ գտեք տեքստերից, նախ և առաջ մեդիայում հրապարակված տեքստերից:

- *Argumentum verbosium* – Տես «Բազմախոսության միջոցով» ապացույցը ստորև:
- Հիմքի կանխարկում (*petitio principii*), որի դեպքում փաստարկի եզրակացությունն առաջնայնորեն ներկայացվում է որպես նախադրյալ:
- Ապացուցման բեռի տեղափոխում (տես *onus probandi*). ես կարիքը չունեմ իմ պնդումն ապացուցելու, դուք պետք է ապացուցեք, որ այն կեղծ է/ճշմարիտ չէ:
- Հիմնավորումների շրջապտույտ (*circulus in demonstrando*). երբ հիմնավորողը սկսում է հենց այն դատողությամբ, որին ձգտում է հանգել. երբեմն կոչվում է նաև «*եզրակացության ընդունում*» կամ «*հիմքի կանխարկում*» (տես վերը):
- Պատճառահետևանքային շրջապտույտ. երբ երևույթի հետևանքը համարվում է դրա հիմնարար/արմատական պատճառը:
- Կոնտինուումի/հզորության տրամաբանական սխալ (մորուքի տրամաբանական սխալ, ուղիղի տրամաբանական սխալ, բազմասիլլոգիզմի սխալ, կույտի տրամաբանական սխալ, ճաղատի տրամաբանական սխալ) պնդումն իր անճշգրտության համար ոչ պատշաճ կերպով մերժելը: Հայտնի պարադոքսն է՝ ո՞ր պահին է կույտը դադարում լինել կույտ, եթե նրանից հատիկ առ հատիկ վերցվում են ավազահատիկները: Կույտի տրամաբանական սխալն ասում է. եթե մարդն ասում է «կույտ», իսկ նրան հակաճառում են, որ դու չես կարող ասել «կույտ», քանի որ չգիտես, նրա մեջ քանի հատիկ կա, ապա դա սխալ հակաճառում է:

## Հարաբերակցային հիմքով տրամաբանական սխալներ

- Հարաբերակցությունն ապացուցում է պատճառականությունը («դրանից հետո, ուրեմն՝ դրա հետևանքով». *post hoc ergo propter hoc*)՝ ոչ ճշմարիտ ենթադրություն այն մասին, որ երկու փոփոխականների միջև հարաբերակցության շնորհիվ է, որ մեկը մյուսի համար պատճառ է դառնում:

- Զսպված հարաբերակից. երբ հարաբերակիցը վերասահմանվում է այնպես, որ այլընտրանքներից մեկը դառնում է անհնար: Օրինակ. Իրադրությունները հայտնի են կամ անհայտ. հայտնի է, որ երկիրը պտտվում է արեգակի շուրջը: Անհայտ է, թե ճշգրտորեն քանի այլ երկնային մարմին է պտտվում արեգակի շուրջը: Պատասխան. ամեն իրադրության մեջ էլ կա անհայտություն. օրինակ՝ անհայտ է, թե ճշգրտորեն դեռ որքան ժամանակ երկիրը կպտտվի արեգակի շուրջը (այստեղ «զսպված» է «երկիրը պտտվում է արեգակի շուրջը» թեզը):
- Աստվածային սխալ (անհավատությունից բխող փաստարկ). պնդելը, թե քանի որ ինչ-որ բան անհավատալի/զարմանահրաշ/անպատկերացնելի է, դա պետք է որ ինչ-որ գերբնական, աստվածային, այլմոլորակային կամ պարանորմալ գործողության արդյունք լինի:
- Կրկնակի հաշվարկ. երբ իրադարձությունները կամ դեպքերը հավանականության վրա հիմնվող դատողություններում հաշվվում են ավելի քան մեկ անգամ, ինչի արդյունքում բոլոր դեպքերի հավանականությունների հանրագումարը գերազանցում է միավորը:
- Երկիմաստություն. ավելի քան մեկ իմաստով եզրույթի ապակողմնորոշիչ/մոլորեցնող գործածությունը (չմասնավորեցնելով, թե ո՛ր իմաստն է նկատի առնվում այդ կոնկրետ իրադրությունում): Սրա տարբերակն է ֆորմալ տրամաբանության մեջ չորրորդ տերմինի ներմուծումը (տես վերը):
- Երկիմաստ միջին տերմին. տարածված երկիմաստություն սիլլոգիզմներում, որոնց միջին տերմինին հաղորդվում է երկիմաստություն: Տես նաև վերին դեպքը:
- Նահանջ սահմանումների մեջ. բառի իմաստի փոփոխություն, սկզբնական ձևակերպման դեմ բարձրացված առարկությանն ի պատասխան:
- Էկոլոգիական սխալ. կոնկրետ անհատների բնավորության/բնույթի մասին մտահանգումները հիմնված են բացառապես համախառն վիճակագրության վրա, որի տվյալները հավաքել է հենց նույն անհատներից կազմված խումբը:
- Ստուգաբանական սխալ. հիմնավորում է, թե բառի կամ արտա-

հայտության սկզբնական կամ պատմական իմաստը անհրաժեշտաբար նման է իր իրական, մերօրյա կիրառությանը:

- Շեշտադրման սխալ. իմաստային անորոշության կոնկրետ տեսակ, որն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ նախադասության իմաստը փոխվում է արտասովոր պրոսոդիկ/հնչերանգային/արտասանական շեշտադրման փոփոխությամբ կամ երբ գրավոր խոսքում հստակ չէ, թե ո՛ր բառի վրա պիտի լինի շեշտադրումը:
- Կոմպոզիցիայի սխալ. երբ ենթադրվում է, որ ինչ-որ բանի մի մասի վերաբերյալ ճշմարիտ դատողությունը ճշմարիտ է նաև ամբողջի վերաբերմամբ:
- Տրոհման սխալ. երբ ենթադրվում է, որ ինչ-որ բանի մասին ճշմարիտ դատողությունը պիտի ճշմարիտ լինի նաև դրա բոլոր մասերի կամ մասերից մի քանիսի վերաբերյալ:
- Կեղծ վերագրում (ատրիբուցիա). երբ հիմնավորողը հղում է անում ոչ վերաբերելի, անհամապատասխան, չհատկորոշված, կանխակալ կամ կեղծված աղբյուրի իր փաստարկի հիմնավորման համար:
- Համատեքստից կտրված ուղիղ մեջբերումներ անելու սխալը («կոնտեքստոմիա»). վերաբերում է սկզբնաղբյուր համատեքստից բառերի՝ ընտրովի, քաղվածքային մեջբերմանն այնպես, որ աղավաղվում է աղբյուրի նկատի ունեցած իմաստը:
- Կեղծ հեղինակություն (եզակի հեղինակություն). կասկածելի վկայագրեր ունեցող փորձագետին հղում անելը կամ միայն մեկ կարծիքին հղումը՝ ապրանքը կամ գաղափարը վաճառելու համար: Հարաբերակից է փաստարկումն առ հեղինակություն սխալին:
- Կեղծ դիլեմա (երկսայրություն) (կեղծ երկճյուղում, բիֆուրկացիայի (ճյուղավորման) սխալ, սև-կամ-սպիտակի մոլորություն). երկու այլընտրանքային ասույթները համարվում են միակ հնարավոր տարբերակները, երբ իրականում տարբերակներն ավելին են, քան այդ երկուսը:
- Կեղծ համարժեքություն. տրամաբանական և ակնհայտ համարժեքության իրավիճակի նկարագրություն, երբ իրականում այդպիսի համարժեքություն գոյություն չունի:

- Բազմահարցության սխալ (բաղադրյալ հարց, կանխենթադրույթի մոլորություն, գերբեռնված հարցադրում, *plurium interrogationum*). ինչ-որ մեկը հարց է տալիս, որը կանխենթադրում է մի բան, որը չի ապացուցվել կամ ընդունվել այն բոլոր անձանց կողմից, ում վերաբերում է: Այս սխալը հաճախ կիրառվում է հռետորաբար, որպեսզի հարցին տրվող ուղիղ պատասխանները սահմանափակվեն նրանցով, որոնք ծառայելու են հարցը տվողի նպատակին:

Օրինակ՝ Ինչ եք կարծում, ինչ կառուցենք ձեր տների տեղում, խանու՞թ, թե՞ կինոթատրոն: Այն, որ մարդիկ համաձայն չեն, սակայն իրենց տները քանդելու են՝ մնում է հարցից դուրս: Քաղաքագիտության մեջ սա նման է «օրակարգի ձևակերպում» և «շրջանակում» կիրառուկներին, որոնք հատուկ են **իշխի**[38] թաքնված և ոչ այնքան թաքնված տեսակներին:

- Եզակի պատճառի սխալ (պատճառականության գերպարզեցում). ենթադրվում է, որ արդյունքի համար կա մեկ, պարզ պատճառ, երբ իրականում արդյունքը կարող է ստացված լինել միայն բավարար բազմակի պատճառներից միասնաբար[39]:
- Գողունի մոլորություն. երբ պնդում են, որ արդյունքները որոշում կայացնողների կողմից չարաշահումների հետևանք են:
- Խաղամոլի սխալ. ոչ ճշմարիտ համոզմունք առ այն, որ առանձին, անկախ իրադարձությունները կարող են ազդել մեկ այլ պատահական իրադարձության հավանականության վրա: Եթե չկեղծված մետաղադրամը 10 անգամ անընդմեջ ընկել է «գրի» վրա, համոզմունքն առ այն, որ «դա նախկինում նույնքան անգամ «ղուշի» վրա ընկնելու շնորհիվ է», ճշմարիտ չէ:
- Պատմաբանի սխալը տեղ է գտնում այն ժամանակ, երբ ենթադրը-

38 Տես «իշխը» բացատրված այստեղ. Ինպե՞ս դիմակայել ինֆորմացիոն հոսքի տարափին. Գևորգ Տեր-Գաբրիելյան (Jam Session 2). http://epfarmenia.am/hy/video/how-to-withstand-information-flow: «Իշխը» power բառի հայերեն տարբերակն է, քանի որ «իշխանություն», «կարողություն», «պետություն» հասկացությունները և power բառի այլ համապարփակ իմաստները «իշխանություն» բառը չեն փոխանցում ամբողջությամբ: Տես նաև. Ներածություն տեքստի հանդեպ քննադատական մտածողության (Jam Session 18). http://epfarmenia.am/hy/video/Critical-Thinking-text-Introduction:

39 Սրա հակառակն է «կոնտեքստի ընդլայնման» կիրառուկը, որն օգնում է այս մոտեցումն ապակառուցել. տես 2018 թ. մարտի Քննադատական մտածողության դպրոցը. Կոնտեքստի ընդլայնում. Գևորգ Տեր-Գաբրիելյան (Jam Session 38). http://epfarmenia.am/hy/video/context-expansion:

վում է, որ անցյալի որոշում կայացնողները դիտարկում էին իրադարձությունները նույն տեսանկյունից և ունեին նույն տեղեկատվությունը, ինչ նրանք, ովքեր հետագայում վերլուծում են որոշումը: (Չպետք է շփոթել պրեզենտիզմի հետ, որը պատմական վերլուծության այն եղանակն է, երբ ներկայի գաղափարները, ինչպես օրինակ՝ բարոյական չափորոշիչները պրոյեկտվում/կանխատեսվում են անցյալում)[40]:

- Պատմական մոլորություն. որտեղ նկատառումների մի ամբողջ շարք վավերական է միայն այն պատճառով, որ ավարտված գործընթացը ներառված է այն գործընթացի բովանդակության մեջ, որը պայմանավորում է այս ավարտուն արդյունքը, և մնացած դեպքերն անտեսված են: Օրինակ (պարզունակացված)՝ Լենինը ստեղծեց Չեկան, որպեսզի Ստալինը հետագայում երկրից ստեղծի համատարած Գուլագ:
- Հոմունկուլուսյան սխալ. որտեղ «միջնորդը» կիրառվում է բացատրության համար: Սա երբեմն հանգեցնում է ռեգրեսիվ միջնորդների առկայության: Բացատրում է առանց բացատրել փորձելու գործառույթի կամ գործընթացի իրական բնույթը: Փոխարենը, բացատրում է հասկացությունը հենց հասկացությամբ, առանց սկզբնական հասկացությունը նախ և առաջ սահմանելու կամ բացատրելու: Միտքը բացատրելը որպես փոքր մտածողի կողմից սերված բան, ինչպես հոմունկուլուսը գլխի մեջ, պարզապես բացատրում է այն որպես այլ տիպի մտածողություն (որպես տարբեր, բայց և նույնական):

Դեպքն առաջացել է գիտնականների անկարողությունից՝ հասկանալ, թե ինչպես է տեսնում մարդու աչքը: Տեսություններից մեկն ասում էր, որ մարդու աչքը, ստանալով պատկերը, հետո այն փոխանցում է մեկ այլ օրգանի («փոքրիկ մարդու, հոմունկուլուսի»), որն էլ այն դիտում է՝ ասես պատկեր կինոէկրանի վրա: Սակայն այդ դեպքում կարելի է պատկերացնել մեկ այլ հոմունկուլուս՝ նստած առաջինի մեջ, որը դիտում է առաջինի աչքի էկրանը, և այդպես շարունակ: Դիսկուրսի

40 Jam Session-ներում «պրեզենտիզմը» և պատմաբանի սխալը քննարկվել են «արխայիկ մտածողություն» ելույթում (արխայիզացիա և մոդերնիզացիա). Արխայիկ մտածողություն. Մաս 1. Տեսլականը և նպատակը՝ քննադատական մտածողության անհրաժեշտ մաս (Jam Session 31). http://epfarmenia.am/hy/video/archaic-thinking-part-1, Արխայիկ մտածողություն. Մաս 2 (Jam Session 33)՝ http://epfarmenia.am/hy/video/Archaic-thinking-part2:

վերլուծության ժամանակ այս սխալին հանդիպում ենք, երբ կասկածվում է, որ մարդն ընկալում է իրականությունը: Այդպիսին են սուբյեկտիվ կամ օբյեկտիվ իդեալիզմի փիլիսոփայության որոշ դեպքեր: Օրինակ՝ եթե ասեն «Աստված է որոշում, թե դու ինչ կտեսնես, և եթե ուզեր՝ այժմ ես քո դիմաց կանգնած չէի լինի»: Կամ՝ «Թշնամու արձակած գնդակն ինձ չի դիպչի, քանի որ իմ ճակատագիրն այլ է»:

- Բախման ինֆլյացիա. գիտելիքի կոնկրետ ոլորտի փորձագետների շրջանում ինչ-որ կետի վերաբերյալ տարաձայնություն է առաջանում, հետևաբար գիտնականները վստահաբար ոչինչ չգիտեն, և այդ իսկ պատճառով իրենց ողջ ոլորտի լեգիտիմությունը հարցականի տակ է դրվում:
- «Եթե-միայն-վիսկի ասելիս». փաստարկ, որը սատարում է խնդրի երկու կողմերին էլ այնպիսի ձևակերպումներով, որոնք ընտրողաբար էմոցիոնալ զգայունություն են պարունակում: «Եթե վիսկի ասելիս դուք նկատի ունեք այդ սարսափելի թմրանյութը...» Մյուս կողմից՝ «եթե վիսկի ասելիս դուք նկատի ունեք այդ հիասքանչ շփումը կիսամութ խորտկարանում»... Շատ տիպական է հայոց հոետորաբանությանը, հատկապես ազգային և հայրենասիրական արժեքները չարաշահող, երբ գերադրական էմոցիոնալությամբ փորձում են սքողել հարցի էությունը և պարտադրել այս կամ այն կարծիքը:
- Թերի համեմատություն. որում տրամադրվող տեղեկատվությունն անբավարար է լիարժեք համեմատություն անելու համար:
- Անհետևողական համեմատություն, որտեղ համեմատության տարբեր մեթոդներն են կիրառվում՝ առաջացնելով լիարժեք համեմատության կեղծ տպավորություն:
- Մտադրության սխալ. պնդումը, որ արտահայտության վերջնական իմաստը պետք է հետևողականորեն համապատասխան լինի այն անձի մտադրությանը, ումից սկիզբ է առնում հաղորդակցությունը (օրինակ՝ գեղարվեստական գործը, որը մեծապես ընդունվել է որպես ակնհայտ/ճչացող այլաբանություն, պարտադիր չէ, որ այդպիսին համարվի, եթե հեղինակի մտադրությամբ գործն այդպիսին չէր նախատեսված):

Սա շատ խոր մտածողության կարիք ունեցող թեզ է, քանի որ սրա հակառակն էլ այն է, որ ցանկացած մեկնաբանություն ավելի արժեքավոր

է, քան նախնական մտածմունքը, որ դրվել է տվյալ տեքստի հիմքում: Երկուսն էլ սխալ են, և միջինը դա «կոնստրուկտիվ» կամ «կոոպերատիվ» կոմունիկացիայի թեզն է[41], որի դեպքում ասողն ասում է, վստահելով, որ լսողը կհասկանա հենց այն, ինչ նկատի է առնվել, և լսողը պատրաստակամ է հենց այդպես վարվելու: Միևնույն ժամանակ՝ մեկնաբանությանն առաջնայնությունը տալը, որոշակի իմաստով, ավելի լեգիտիմ է, քան այն փաստարկը, որ քանի որ ասողը «դա նկատի չի ունեցել», ուրեմն մեկնաբանությունն անհիմն է, կամ այն փաստարկը, որ միայն ասողի սեփական մեկնաբանությունն է իր ասածի, որ լեգիտիմ է: Թե ինչու է մեկնաբանության իրավունքն ավելի առաջնային՝ կա մի քանի պատճառ: Մեկն, օրինակ, այն է, որ հաճախ հնարավոր չէ վերջնականապես պարզել, թե ասողն «ինչ նկատի ուներ իրականում» (ասենք, մանավանդ, երբ ասողն այլևս չկա): Մյուսը կապված է փիլիսոփայական որոշակի մոտեցումների հետ, որոնց հիմքում այն թեզն է, որ մարդկությունն ապրում է զարգանալու և ստեղծագործելու համար, այլ ոչ թե անցյալին գամված լինելու և չհամարձակվելու առաջ գնալ կամ սխալվել:

- *Ignoratio elenchi* (անհամապատասխան եզրակացություն, բուն հիմնավորման ձախողում). փաստարկում, որն ինքնին կարող է վավերական լինել, բայց չի հասցեագրում հարցադրման տակ գտնվող խնդիրը:
- «Թեյնիկի» տրամաբանություն. բազմակի, միասնաբար անհետևողական փաստարկումների կիրառում՝ ի սատարում որևէ դիրքորոշման:
- Խաղային մոլորություն. համոզմունք, որ չկարգավորված պատահական իրադարձությունների արդյունքները կարող են պարփակվել վիճակագրական մոտեցման մեջ. տեղի ունեցող իրադարձությունների հավանականությունը որոշելիս անհայտները հաշվի չառնելը:
- Մակնամարայի մոլորություն (քանակական մոլորություն). միայն քանակական դիտարկումների հիման վրա, առանց այլ նկատառումները հաշվի առնելու որոշում կայացնելը:

41 Տե՛ս Ներածություն տեքստի հանդեպ քննադատական մտածողության (Jam Session 18). http://epfarmenia.am/hy/video/Critical-Thinking-text-Introduction: Կառուցողական և ոչ կառուցողական հաղորդակցություն. Տերմիններ. http://epfarmenia.am/sites/default/files/inline-files/Training_Terms_Gevorg_Ter_Gabrielyan_25Oct2016.pdf

- Մորալիստական սխալ. զուտ գնահատողական նախադրյալներից բխող փաստացի եզրահանգումների գալը՝ խախտելով փաստերի և արժեքների միջև տարբերակումը: Օրինակ՝ *բարոյապես պարտավոր է*-ից *է (որեմն՝ կա)* մտահանգելը մորալիստական սխալի դեպք է: Մորալիստական սխալը ստորև սահմանված նատուրալիստական սխալի հակադարձն է:
- Դարպասաձողերը տեղաշարժելը (նշաձողը բարձրացնելը). փաստարկումը, որում կոնկրետ պնդմանն ի պատասխան ներկայացվող ապացույցը հերքվում է և պահանջվում է որևէ այլ (հաճախ էլ ավելի ծանրակշիռ) ապացույց:
- Նատուրալիստական սխալ. գնահատողական եզրակացությունների հանգելը զուտ փաստացի նախադրյալներից՝ խախտելով փաստերի և արժեքների միջև տարբերակումը: Օրինակ՝ *է*-ից (*կա*-ից) *բարոյապես պարտավոր է* մտահանգելը (երբեմն այն անվանում են «*է-բարոյապես պարտավոր է*»-ի *սխալ*) նատուրալիստական սխալի օրինակ է: Բացի այդ, կա նատուրալիստական սխալ ավելի խիստ իմաստով, ինչպես այն սահմանված է ստորև «Պայմանի կամ կասկածի սխալներ» բաժնում: Նատուրալիստական սխալը մորալիստական սխալի հակադարձն է:
- *Նատուրալիստական սխալի* սխալ (հականատուրալիստական սխալ) մտահանգել, որ անհնար է *է*-ից *բարոյապես պարտավոր է*-ի որևէ դեպքի մտահանգել վերոնշյալ «*է-բարոյապես պարտավոր է*»-ի սխալի ընդհանուր անվավերությունից: Օրինակ՝ *է*-ն չի նշանակում *բարոյապես պարտավոր է* որևէ պայմանական դատողության համար, թեև *նատուրալիստական սխալի* սխալը այսպիսի մտահանգումը ոչ ճշմարիտ կերպով կհայտարարի անվավեր: *Նատուրալիստական սխալի* սխալը սխալից բխող փաստարկման օրինակ է:
- Նիրվանայի սխալ (կատարյալ լուծման սխալ). երբ խնդիրների լուծումները մերժվում են, որովհետև դրանք կատարյալ չեն:
- *Onus probandi*. լատիներենից “onus probandi incumbit ei qui dicit, non ei qui negat”. ապացույցի բեռը պնդմամբ հանդես եկողի վրա է, ոչ նրա, ով հերքում է այն (կամ կասկածի տակ է դնում պնդումը): Սա *argumentum ad ignorantiam* սխալի կոնկրետ դեպք է, այստեղ բեռը տեղափոխվում է այն մարդու վրա, ով պաշտպանվում է պնդումից:

- *Post hoc ergo propter hoc*. լատիներեն՝ «սրանից հետո, ուրեմն՝ դրա պատճառով» (կեղծ պատճառ/հետևանք, պատահական հարաբերակցություն, հարաբերակցություն առանց պատճառականության). X-ը տեղի ունեցավ, ապա տեղի ունեցավ Y-ը, այդ իսկ պատճառով X-ը դարձավ պատճառ Y-ի համար: Լոխ Նեսի հրեշին տեսել են այս լճում: Ինչ-որ բան ճոճեց մեր մակույկը. դա անտարակույս Լոխ Նեսի հրեշն էր:
- Հավաստիացման միջոցով ապացուցման սխալ. դատողությունը կրկնաբար վերաձևակերպվում է չնայած հակասությանը, երբեմն շփոթում են կրկնությունից բխող փաստարկման հետ (*argumentum ad infinitum*, *argumentum ad nauseam*): «Գեշ անվերջություն»[42] փիլիսոփայական տերմինի մասնավոր դրսևորման դեպք է:
- Բազմախոսության ապացույց (*argumentum verbosium*, ապացույց ահաբեկմամբ). երբ այլք հանձնվում են, որովհետև փաստարկումը չափազանց խրթին և բազմաբառ է՝ խելամտորեն դրա բոլոր մանրամասները քննելու համար: (Տես նաև Գիշի քառատրոփը և հեղինակությունից բխող փաստարկումը:)
- Դատախազի սխալ. համապատասխանությունների ցածր հավանականությունը չի նշանակում *ինչ-որ* չստուգված համապատասխանությունների ցածր հավանականություն: «Քանի որ քիչ է հավանականությունը, որ զոհի արյունը հայտնաբերվի անմեղի շորի վրա, ուրեմն մեղադրյալը մեղավոր է»:
- Չափից ավելի ապացուցում. փաստարկման այնպիսի ձևի կիրառումը, որը, եթե ստուգվի մինչև վերջ՝ կարող է հասցնել լրացուցիչ, անցանկալի և/կամ փաստարկի հակառակ նպատակադրմամբ եզրակացության:
- Հոգեբանի սխալ. դիտորդը կանխավ ենթադրում է իր իսկ տեսակետի օբյեկտիվությունը, երբ վերլուծում է վարքագծային իրադարձությունը:
- Red herring (կարմիր ծովատառեխ). խոսողը փորձում է շեղել լսարանին՝ շեղվելով բուն թեմայից և ներմուծելով մեկ այլ, հարցին չվերաբերող փաստարկում, որն ավելի շահեկան է լսարանի

42 Տես «գեշ անվերջություն» տերմինը Միխայիլ Բախտինի մոտ. https://web.facebook.com/permalink.php?story_fbid=936432063073125&id=333482320034772&_rdc=1&_rdr
Տես նաև. Միխայիլ Բախտին. Գևորգ Տեր-Գաբրիելյան. http://boon.am/mikhail-bakhtin/

ուշադրությունը գամված պահելու համար: Տե՛ս նաև ստորև՝ մի ամբողջ ենթաբաժին այդպիսի կիրառուկների:

- Ռեֆերենտային սխալ. ենթադրվում է, որ բոլոր բառերը, եթե անվանում են գոյություն ունեցող բաներ՝ նրանց իմաստները գոյություն ունեն այն առարկաներում, որոնք դրանք անվանում են, ի հակադրություն այն բառերի, որոնք հավանաբար անվանում են ոչ իրական օբյեկտ[43]: Կամ՝ որ բառերի իմաստը հաճախ բխում է նրանից, թե ինչպես են դրանք գործածվում (այսինքն՝ որ բառը չունի հստակ, կոնտեքստից դուրս ու անկախ իմաստ, ինչը կոչվում է «նշանակություն»), ինչը վերն ասվածի հակառակ սխալն է:
- Ռեգրեսիոն սխալ. վերագրում պատճառ այն դեպքում, երբ այն գոյություն չունի: Թերությունն այն է, որ հաշվի չի առնում բնական տատանումները: Այն հաճախ *post hoc*՝ «դրանից հետո» սխալի հատուկ տեսակ է:

Այս սխալը հաճախ, երբեմն էլ՝ ստիպված, որպեսզի դոնորներին ցույց տան իրենց պիտանիությունը, անում են այն կազմակերպությունները, որոնք փորձում են փոքր միջոցներով ազդել հանրային պրոցեսների վրա: Հաճախ կարելի է հանդիպել հաշվետվություններում. «Գործազուրկների քանակը, ըստ Գելլապի հետազոտության, տվյալ երկրում պակասեց 3 տոկոսով. դա տեղի ունեցավ շնորհիվ նրա, որ մեր կազմակերպությունն աշխատանք գտնելու դասընթացներ կազմակերպեց մեկ տարվա մեջ հարյուր գործազուրկի համար»: Առաջին դեպքում խոսքը հազարների մասին է, իսկ երկրորդում՝ ընդամենը հարյուրի, և չնայած երկրորդ դեպքը, հավանական է, իրոք դրական է ազդել առաջին տվյալի գոյացման վրա՝ սակայն չի կարող լինել հիմնական պատճառ. հիմնական պատճառները պետք է փնտրել այլ, հավելյալ հանգամանքներում:

- Առարկայացում (կոնկրետացում, նյութականացում, կամ թյուր բաշխված կոնկրետության սխալ). անորոշության սխալ, երբ վերացականը (վերացական համոզմունքը կամ հիպոթետիկ գաղափարն) ընկալվում է որպես կոնկրետ, իրական եղելություն կամ որպես ֆիզիկական անձ: Այլ կերպ ասած՝ «անիրականը», որն ըն-

43 Այս սխալը խոշոր նշանակություն է ունեցել գիտության, մասնավորապես լեզվաբանության զարգացման պատմության մեջ. տե՛ս այդ խնդրին անդրադարձ այստեղ. http://gtergab.com/hy/news/methodology-2/predicative-and-cognitive-paradigms-etc/116/

դամենը գաղափար է, որպես իրական դիտարկելն է:

Սրա մի տարատեսակն է՝ համարելը, որ, ասենք, մարդու իրավունքները ոչ թե համամարդկային արժեքներ են, այլ Արևմուտքի մշակութային պատմության արգասիք, և ուրեմն որ այլ մշակույթներ դրանք պիտի ընկալեն թշնամաբար՝ որպես Արևմուտքի գաղափարական էքսպանսիայի արտահայտում[44]:

- Ռետրոսպեկտիվ դետերմինիզմ. փաստարկում առ այն, որ եթե այս կամ այն հանգամանքներում որևէ իրադարձություն է տեղի ունեցել, ապա այդ հանգամանքները պատճառ են հանդիսացել այդ իրադարձության անխուսափելի իրագործման:

Սրա մի տարբերակն է՝ «դավադրությունների տեսությանը»[45] հակվածի փաստարկը, ըստ որի, եթե մի դեպք է կատարվել, ապա դա կազմակերպել է նա՝ ում այդ դեպքի արդյունքն ամենից շահավետ էր (կամ այդպես թվում է) կամ ով «լավագույն կերպով» (ըստ դա պնդողի) օգտագործեց այդ դեպքի արդյունքը: Օրինակ՝ իբր 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը կազմակերպել էր ԱՄՆ-ի իշխը, որպեսզի պատճառ ունենա հարձակվելու իսլամական երկրների վրա:

- Հրազենային փաստարկում. փաստարկման կողմերից մեկը ներկայացնում է իր դիրքորոշումը հիմնավորող մի շարք փաստարկներ, իսկ հակառակորդը դժվարանում է բոլորին պատասխան տալ: (Տես՝ վերոնշյալ «բազմախոսության ապացույցը» և «Գիշի քառատրոփը»)

- Կողմնակալ փաստարկում. երբ դիրքորոշմանը հարողը փորձ է անում որևէ բան ներկայացնել որպես ընդունված կանոններից կամ սկզբունքներից բացառություն առանց այդ բացառության կարևորության պատճառաբանման:

- Հակառակ ուղղություն. որտեղ պատճառն ու հետևանքը հակադարձված են: Պատճառը ներկայացվում է որպես հետևանք, իսկ հետևանքը՝ որպես պատճառ: Նման է նաև ռետրոսպեկտիվ դետեմինիզմին:

---

44 Տես այդ մասին այստեղ «Համակարգված Մտագործունեության Մեթոդաբանություն և Կրեատիվ Խաղեր (էջ 10-11). http://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game

45 Տես Դավադրության տեսություն. Մաս 1 (Jam Session 21). http://epfarmenia.am/hy/video/conspiracy-theory-part-1, Դավադրության տեսություն. Մաս 2 (Jam Session 23). http://epfarmenia.am/hy/video/conspiracy-theory-part-2

Ուշադրություն դարձնենք, որ կան դեպքեր, երբ այդպիսի փաստարկումն իրավունք ունի գոյություն ունենալու: Օրինակ՝ եթե մարդ նպատակ է դնում ինչ-որ բան անել՝ այդ նպատակը դառնում է մարդու կողմից այդ բանն անելու պատճառ, դրդիչ, իսկ երբ այդ բանը ստացվում է ու մարդ նպատակին հասնում է՝ ստացվում է, որ հետևանքը դարձել էր պատճառ: Սակայն այս մեկնաբանությունը ելնում է այն դրույթից, որ պատճառն ու հետևանքը միայն մոտավորապես են համընկնում, և նաև սա վերագրելի է միայն գիտակից մարդկային գործունեությանն առնչվող դեպքերին: Կա տեսություն, ըստ որի բուն պատճառա-հետևանքային կապերի մասին կարելի է խոսել միայն բնական պրոցեսների և անշունչ ու անգիտակից առարկաների դեպքում, քանի որ մարդն ունի ազատ կամք, ինչը խաթարում է բնական պատճառա-հետևանքային կապերը, միջամտելով դրանց բնական դրսևորման մեջ: Այդ դեպքում բոլոր հասարակական պրոցեսները բացատրվում են ոչ թե պարզապես պատճառա-հետևանքային կապով՝ այլ բազում նպատակա-հետևանքային կապերով: Տե՛ս, օրինակ, Լև Տոլստոյի տեսությունը՝ 1812 թ. պատերազմի վերաբերյալ, «Պատերազմ և խաղաղության» վեպի չորրորդ հատորի վերջում:

## Թյուր ընդհանրացումներ

Սխալ ընդհանրացումը թույլ նախադրյալներից եզրակացության հանգելն է: Ի տարբերություն համապատասխանության/վերաբերելիության տրամաբանական սխալների, թերի ինդուկցիայի դեպքում նախադրյալները թեև առնչվում են եզրակացությանը, այնուամենայնիվ, եզրակացության համար լիարժեք հենք չեն ծառայում: Այսպես ստացվում է թյուր ընդհանրացում:

- Պատահականության սխալ. անտեսվում են ընդհանրացումից գոյություն ունեցող բացառությունները:
- Ոչ մի շոտլանդացի ճիշտ չէ. փաստարկումն ընդհանրացումը ներկայացնում է որպես ճշմարիտ, որպեսզի բացառի հակառակ օրինակի հնավորությունը:
- Փաստերի ընտրողաբար ներկայացում (թաքնված ապացույց, թերի ապացույց). տվյալ դիրքորոշումը հիմնավորելու համար առանձին դեպքերի կամ տվյալների ներկայացում՝ անտեսելով դիրքորոշմանը հակասող դեպքերը կամ տվյալները:

- Վերապրածի կողմնակալություն. երբ ակտիվորեն ներկայացվում են տվյալ գործընթացի հաջողությունները՝ անտեսելով մեծաթիվ ձախողումները:
- Թույր համանմանություն. համանմանության միջոցով փաստարկի հիմնավորում համանմանության թույլ համապատասխանությամբ:
- Հապճեպ ընդհանրացում (անբավարար վիճակագրական տվյալների սխալ, անբավարար նմուշների սխալ, եզակի փաստի սխալ, հապճեպ եզրակացության հանգելու սխալ, հապճեպ ինդուկցիայի սխալ, *secundum quid՝ իրավիճակային և ընդհանրական փաստարկների անորոշության*, հակադիրը պատահականություններ հայտարարել). տրամաբանական սխալ՝ մասնավոր սակավաթիվ օրինակներով ընդհանուր եզրակացության հանգելը:
- Ինդուկտիվ սխալ. որոշ տրամաբանական սխալների, օրինակ՝ հապճեպ ընդհանրացման, առավել ընդհանրական անվանումն է, որտեղ եզրակացությունն արվում է առանց լիարժեք հիմնավորող նախադրյալների:
- Խաբուսիկ գունագեղություն. երբ իրադարձությունը ներկայացվում է վառ մանրամասներով, նույնիսկ եթե դա եզակի իրադարձություն է՝ համոզելու, որ այն խնդիրներ կարող է առաջացնել կամ ավելի նշանակալի է, քան իրականում այն է:
- Գերակշռող բացառություն. որակմամբ ուղեկցվող ընդհանրացում, երբ մասնավոր որոշ կամ մի շարք դեպքերի բացառումը ենթադրում է, որ դրանք պակաս տպավորիչ են, քան կարելի էր ենթադրել նախնական պնդման պարագայում, մինչդեռ տեղի ունի հակառակը:
- Միտքը խաթարող կլիշե. հաճախակի կիրառվող արտահայտություն, որը ներկայացվում է որպես ժողովրդական իմաստություն և գործածվում որպես ճանաչողական դիսոնանսի զսպման, մտածական գործունեության թերության քողարկման, այլ թեմաների քննարկման և այլնի միջոց՝ յուրաքանչյուր դեպքում բանավեճն ավարտելով ոչ թե որևէ տեսակետով, այլ կլիշեով:

## Կարմիր ծովատառեխի (Red herring) սխալներ

Կարմիր ծովատառեխի սխալը համապատասխանության/վերաբերելիության սխալների հիմնական ենթատեսակներից մեկն է: Այն տրամաբանական մտածողության այնպիսի սխալ է, որի ժամանակ դատողությունը մոլորեցնող է կամ նպատակ ունի մոլորեցնելու՝ ոչ վերաբերելի կամ կեղծ մտահանգումներ առաջ բերելու համար: Ընդհանուր առմամբ ցանկացած տրամաբանական մտահանգում, որը հիմնված է կեղծ փաստարկների վրա, նպատակ ունի փոխարինելու իրական փաստարկների պակասը կամ անուղղակիորեն փոխելու քննարկման թեման:

Կարմիր ծովատառեխ. մեկ այլ փաստարկին ի պատասխան բերված փաստարկ, որը նյութին վերաբերելի չէ և ուշադրությունը շեղում է փաստարկման բուն առարկայից: *Տե՛ս նաև անհամապատասխան/ոչ վերաբերելի եզրակացություն:*

- *Ad hominem «Փաստարկումն առ մարդ»*. փաստարկին հակադրվելու փոխարեն փաստարկողի վրա հարձակվելը:
- Ձրհորի թունավորում. առ մարդու փաստարկման ենթատեսակ, որտեղ թիրախ անձի մասին բացասական տեղեկությունները ներկայացվում են՝ նպատակ ունենալով վարկաբեկել թիրախ անձի ասած ամեն ինչը:
- Վիրավորելու սխալը. առ մարդու փաստարկման ենթատեսակ է, որի ժամանակ հակառակորդի անձն են վիրավորում՝ առաջադրվող փաստարկի մասին վիճելու փոխարեն:
- Փաստարկումն առ դրդապատճառ. առ մարդու փաստարկման ենթատեսակ, որը հերքում է միտքը՝ այն առաջադրողի դրդապատճառները կասկածի տակ դնելով:
- Կենտրոնացում տոնի վրա. առ մարդու փաստարկման ենթատեսակ է, որը կենտրոնանում է ուղերձի հետևում ընկած զգացմունքների, ոչ բուն ուղերձի վրա, որպես ուղերձի կարևորությունն արժեզրկող հնար:
- Դավաճան քննադատի սխալ (*ergo decedo*). *ad hominem*-ի ենթատեսակ, երբ քննադատության հիմքում ընկած պատճառը համարվում է քննադատողի՝ որևէ խմբին կամ հանրույթին ունեցած ընկալվող հարաբերությունը, և քննադատողին խնդրում են առհասարակ

հեռու մնալ տվյալ հարցից: Տիպական դեպք էր՝ կապտամազիկի պատմությունը[46]:

- Փաստարկում առ հեղինակություն (*argumentum ad verecundiam*). երբ պնդումը համարվում է ճշմարիտ այդ պնդումն անողի պաշտոնի կամ հեղինակության պատճառով:
- Փաստարկում առ ձեռքբերումները. երբ պնդումը համարվում է ճշմարիտ կամ կեղծ՝ փաստարկն առաջադրողի ձեռքբերումների հիման վրա:
- Փաստարկում առ հետևանքներ (*argumentum ad consequentiam*). եզրակացությունը հիմնավորվում է նախադրյալով, որը պնդում է որևէ գործողության դրական կամ բացասական հետևանքների մասին՝ փորձելով շեղել սկզբնական քննարկումից:
- Փաստարկում առ զգացմունք. երբ փաստարկումն արվում է զգացմունքային շահարկումների և ոչ հիմնավոր պատճառաբանությունների շնորհիվ:
- Փաստարկում առ վախ. առ զգացմունքի փաստարկման հատուկ տեսակ, որտեղ փաստարկումն արվում է հակառակ կողմի նկատմամբ վախը և նախապաշարմունքները մեծացնելով:
- Փաստարկում առ շողոքորթություն. առ զգացմունքի փաստարկման հատուկ տեսակ, երբ փաստարկումն արվում է՝ աջակցություն ստանալու համար շողոքորթության դիմելով:
- Փաստարկում առ խղճահարություն (*argumentum ad misericordiam*). փաստարկումը փորձում է հակառակորդներին շեղելու համար խղճահարություն առաջացնել:
- Փաստարկում առ ծաղր. փաստարկումն արվում է՝ ներկայացնելով հակառակորդի փաստարկն այնպես, որ այն ծիծաղելի թվա:
- Փաստարկում առ չարություն. առ զգացմունքների փաստարկման կոնկրետ տեսակ, երբ փաստարկումն արվում է մարդկանց ունեցած նեղացածությունը կամ չարությունը հակառակորդ կողմի վրա ուղղելով:
- Փաստարկում առ երևակայություն. առ զգացմունքների փաստարկման կոնկրետ տեսակ, երբ որոշումը կայացվում է ըստ նրա,

46 Արցախում ՀՀ քաղաքացի Ասյա Խաչատրյանի հետ տեղի ունեցած դեպքի շուրջ. http://bit.ly/2Vin4Q7

թե ինչը կարող է երևակայության համար հաճելի լինել, ապացույցների կամ հիմնավորումների հիման վրա կայացվելու փոխարեն:

- Փաստարկում առ բնականություն. երբ դատողությունը բացառապես հիմնված է նրա վրա, արդյոք դատողության առարկան «բնական» է, թե «անբնական»: (Երբեմն նաև այսպես կոչված «նատուրալիստական սխալ», սակայն այն չպետք է շփոթել այդ անունը կրող այլ սխալների հետ):
- Փաստարկում առ նորույթ (*argumentum novitatis*, *argumentum ad antiquitatis*). երբ առաջադրվող միտքը համարվում է ավելի բարձր կամ ավելի լավը զուտ այն պատճառով, որ այն նոր է կամ ժամանակակից:
- Փաստարկում առ Ղազարոս կամ առ աղքատություն (*argumentum ad Lazarum*). եզրակացության հիմնավորում, որովհետև փաստարկ բերողն աղքատ է (կամ դրա հերքում, որովհետև փաստարկը բերողը հարուստ է): Փաստարկում առ հարստության հակառակը:
- Փաստարկում առ ավանդույթ (*argumentum ad antiquitatem*). եզրակացություն, որը հիմնավորվում է զուտ այն պատճառով, որ շատ երկար ժամանակ այն ճշմարիտ է համարվել:
- Փաստարկում առ հարստություն (*argumentum ad crumenam*). եզրակացությունը հիմնավորելը այն պատճառով, որ փաստարկը բերողը հարուստ է (կամ այն հերքելը, որովհետև փաստարկ բերողն աղքատ է): (Երբեմն այն վերցնում են Փաստարկում առ աղքատության հետ մասին, որպես մեկ ընդհանրական փաստարկում՝ ուղղված փաստարկները բերողի ֆինանսական վիճակին):
- *Argumentum ad baculum* (փաստարկում առ մական, փաստարկում առ ուժ, փաստարկում առ սպառնալիք). փաստարկ, որն արվում է հարկադրանքի կամ ուժի կիրառման սպառնալիքի միջոցով դիրքորոշումը հիմնավորելով:
- *Argumentum ad populum* («փաստարկում առ հանրությունը», փաստարկում առ տարածված կարծիք, փաստարկում առ մեծամասնություն). երբ դատողությունը համարվում է ճշմարիտ կամ հիմնավոր, որովհետև շատերն են այն այդպիսին համարում:
- Ասոցացվածությամբ սխալ (թերություն ասոցացվածության շնորհիվ կամ գնահատանք ասոցացվածության շնորհիվ). փաստար-

կում այն մասին, որ քանի որ երկու բան ունեն (կամ ենթադրվում է, որ ունեն) ընդհանուր հատկանիշ, դրանք նույնն են:

- «Բուլվերիզմ» (հոգեծին սխալ). մտահանգում փաստարկման կիրառման պատճառների մասին. կապում են այն ինչ-որ հոգեբանական պատճառի հետ, ապա ենթադրություն է արվում, որ արդյունքում այդ փաստարկը վավերական չէ: Սխալ է ենթադրել, թե եթե գաղափարը ծագել է կողմնակալ մտքում, ապա գաղափարն ինքնին նույնպես պիտի կեղծ լինի:
- Ժամանակագրական սնոբիզմ. երբ վարկածը համարվում է ոչ ճշմարիտ, որովհետև այդպես էին կարծում մի ժամանակ, երբ նաև ակնհայտ ոչ ճշմարիտ մի ուրիշ բան էին կարծում:
- Հարաբերական զրկանքի սխալ («այնքան վատ չէ, որքան»)՝ փաստարկը կամ բողոքը հերքելը աշխարհում գոյություն ունեցող այլ, ավելի կարևոր խնդիրների պատճառով անկախ նրանից, թե այդ խնդիրները վերաբերում են սկզբնական փաստարկմանը, թե ոչ: Օրինակ՝ Առաջին աշխարհի պրոբլեմը:
- Գենետիկ սխալ. երբ եզրակացությունն առաջադրվում է զուտ ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի ծագման հիմքով, դրա ներկայիս նշանակության կամ համատեքստի փոխարեն: Օրինակ՝ «պատերազմի հերոսը չի կարող դառնալ հանցագործ»:
- Վիրավորական ձևակերպումներ. ընկալողի դատողության վրա ազդելու համար վիրավորական կամ նվաստական ձևակերպումների գործածում:
- Պահ-պահ. փաստարկի հերքումը, որովհետև այն ընկալվել է որպես լուրջ քննության ոչ արժանի:
- Ծղոտե մարդու սխալ. փաստարկում, որը հիմնված է հակառակորդի դիրքի թյուր ներկայացման հետ:
- Տեխասցի դիպուկահարի սխալ. պատճառի ոչ պատշաճ պնդումը՝ տվյալների մի ողջ խումբ միավորելով և մեկ այլ, հակասող տվյալների խմբի ընդհանրությունը չդիտարկելով:
- *Tu quoque* («դու նույնպես», փաստարկում առ երեսպաշտություն, «ինձ ինչ ասես՝ ինքդ ես»). փաստարկումը պնդում է, որ կոնկրետ դիրքորոշումը սխալ է կամ չպետք է հաշվի առնվի, որովհետև

դրան հարողը չի կարողանում հետևողականորեն գործել այդ դիրքորոշման համաձայն:

- Երկու սխալը մի ճիշտ է տալիս. տեղ է գտնում այն ժամանակ, երբ ենթադրվում է, որ եթե մի սխալ է թույլ տրվել, ապա «համարժեք, բայց հակառակ» սխալը կչեղարկի այն:
- Դատարկ/անբովանդակ ճշմարտություն. պնդում, որը տեխնիկապես ճշմարիտ է, սակայն անիմաստ. պնդման այն ձևը, թե $B$ –ում ոչ մի $A$ չունի $C$, երբ $B$ –ում $A$ չկա: Օրինակ՝ պնդել, որ սենյակում ոչ մի միացված բջջային հեռախոս չկա, երբ սենյակում ընդհանրապես բջջայիններ չկան:
- Փաստարկում առ բացահայտ ճշմարտություն. պնդում առ այն, որ դատողությունը բացահայտ ճշմարիտ է, հետևաբար այլևս ապացույցներով հիմնավորման կարիք չկա: Եթե բացահայտությունն իրականում պնդման համար հիմք չէ, այն կամայական է, և հակառակը (հակասող կամ հակադիր ասույթը) հավասարապես ճշմարիտ է: Օրինակ՝ Աստված կա: Շատ դեպքերում, այնուամենայնիվ, հիմքն իրականում չբարձրաձայնված և չքննված դիտարկում կամ ենթադրություն է: Օրինակ՝ Պառլամենտական համակարգն ավելի լավն է, քան նախագահականը:

## Պայմանական կամ վիճելի տրամաբանական սխալներ

**Պայմանական կամ վիճելի են կոչվում այն սխալները, որոնք կարող են նաև սխալ չլինել որոշ դեպքերում, սակայն տվյալ գործածության դեպքում կամ անհնարին է դա ստուգել, կամ ապացուցելի է, որ անհարիր են գործածվել՝ մանիպուլյատիվ նպատակներով, իշխը հաստատելու նպատակադրմամբ:**

- Կոտրված պատուհանի մոլորություն. փաստարկ, որն անտեսում է այլոց սեփականությունը ոչնչացնելու հետ կապված ծախսերը, որ հանգեցնում են կորցրած հնարավորությունների (որոնք սովորաբար ոչ ակնհայտ, դժվարըմբռնելի կամ որևէ այլ կերպ քողարկված են), կամ ծախսային պարտավորություններն այլոց վրա դնելու այլ ձևերը: Օրինակ՝ կոտրված պատուհանի փաստարկը ենթադրում է եկամուտ փականագործի համար, անտեսելով, որ նոր պատուհանի համար հատկացվող գումարը չի կարող ծախսվել նոր կոշիկների վրա:

Այս փաստարկը շատ մեծ դեր է կատարում ավտորիտար հասարա-

կություններում, որտեղ հայտարարվում է, օրինակ, որ ոստիկանության ահռելի բանակի և ազատությունների սահմանափակման «շնորհիվ» հանցագործությունները քիչ են, ու չի դիտարկվում, որ եթե ազատությունները չսահմանափակվեին, ազատ մարդիկ շատ ավելի որակյալ կյանք կունենային ու կզարգացնեին երկիրը:

- Սահմանմամբ տրամաբանական սխալ. ենթադրում է երկու հասկացությունների միջև շփոթություն մեկը մյուսով սահմանելու միջոցով: Օրինակ՝ բարին և հաճելին նույնն են, ուրեմն, եթե վիսկի խմելը հաճելի է, ապա դա նաև բարի արարք է:
- Նատուրալիստական մոլորություն (տես նաև վերը, երբեմն կոչվում է փաստարկում առ բնություն). փորձում է ապացուցել էթիկական որևէ պնդում՝ գործածելով բնական հատկանիշների կամ Աստծո կամքի մասին արվող պնդումների նկատմամբ էթիկական հատկանիշ, ինչպես օրինակ՝ Աստված է ստեղծել կյանքը, ուրեմն այն բարի է:
- Սայթաքուն լանջ (սեպի բարակ սայր, ուղտի քիթ). պնդում է, որ համեմատաբար փոքր առաջին քայլն անխուսափելիորեն հանգեցնում է փոխկապակցված իրադարձությունների շղթայի, որոնք գումարվում են՝ առաջ բերելով զգալի ազդեցություն/իրադարձություն, հետևաբար, եթե առաջին քայլը չարվեր, շղթան չէր գոյանա: Այս տրամաբանական սխալի հիմքում «փաստարկում առ հավանականություն» սխալն է (օրինակ՝ եթե x մարդը անի y-ը, ապա [հավանաբար] տեղի կունենա z-ը, որը կհանգեցնի q, որն էլ իր հերթին՝ w, իսկ w-ը՝ e-ի): Սա նաև կարելի է դիտարկել որպես reductio ad absurdum (աբսուրդին միտում):

*Շնորհակալություն Անի Թովմասյանին՝ սույն հրապարակման կայացմանն անգնահատելի օգնություն ցուցաբերելու համար:*

# ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ

«Մեդիագրագիտություն» ձեռնարկ, Երևան, 2016թ. http://mediainitiatives.am/wp-content/uploads/2016/11/Media-Literacy-Armenian.pdf

«Զրույցներ լրագրողական էթիկայի մասին» («Ինտերնյուսի» հրատարակած «Լրագրողական էթիկա. զրույցներ և վերլուծություններ» ժողովածուում), Երևան, 2012թ. https://www.scribd.com/doc/117363085/%D4%BC%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A7%D5%A9%D5%AB%D5%AF%D5%A1

«Բացահայտումների հետագծով» լրագրողական ձեռնարկ, Երևան, 2017թ. http://mediainitiatives.am/wp-content/uploads/2017/07/Tvapatum-Investigation-Armenian.pdf

«Ինչին է ծառայում լրագրությունը» ուսուցողական ձեռնարկը, Երևան, 2014թ. http://epfarmenia.am/hy/document/What-Journalism-serves-to

Glossary of ethical coverage in the media of Armenia and Azerbaijan, Baku & Yerevan, 2008-2013 (English version): http://epfarmenia.am/sites/default/files/Document/Glossary_of_Hate_Speech_in_Media_of_Armenia_and_Azerbaijan_2013.pdf

Glossary of ethical coverage in the media of Armenia and Azerbaijan, Baku & Yerevan, 2008-2013 (Russian version): http://epfarmenia.am/sites/default/files/Document/Glossary_of_Hate_Speech_in_Media_of_Armenia_and_Azerbaijan_2013_Russian.pdf

«Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ» խորագրով հետազոտությունների ժողովածու, Երևան, 2017թ. http://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

«Ստուգված» տեղեկությունների ստուգման համառոտ ուղեցույց, Երևան, 2017թ. http://mediainitiatives.am/wp-content/uploads/2017/11/Verified-Armenian.pdf

«Jam Session» տեսահոլովակների շարք, 2016-2018թթ. http://epfarmenia.am/hy/Jam-Session

# ABSTRACT

This manual, entitled *Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks*, is a rare publication on critical thinking, written in Armenian and for the Armenian audience. It is based on the methodological and educational practices as well as the experience accumulated by the specialists of Eurasia Partnership Foundation (EPF). During several years EPF tested and improved the methodological approach reflected in this manual via providing education on critical thinking and media literacy in Armenian, addressing both the issues of internal Armenian social and political landscape as well as based on its work in Armenian-Azerbaijani and Armenia-Turkey dialogue. The conflict transformation and other educational events, or 'schools' on critical thinking, offered by EPF to the Armenian civil society, were supported over the years by USAID, the UK Government, EU, and other donors. In this work EPF partnered with the Media Initiatives Center (former Internews), Yerevan Press Club, and other professional organizations, who also worked on developing the methodology and offered education on critical thinking to the Armenian civil society. However, the publication of the current manual is the sole responsibility of EPF; no funds of any donor are used for its development and print.

The manual discusses the notions of media literacy and critical thinking with a particular focus on critical thinking. The publication explains why critical thinking skills are the key for navigating in the challenging and quickly transforming social and political environment and media landscape in today's world. It focuses on the problem of information overload, the need to avoid misinformation, and the connection between power and communication. The manual also introduces the principles of cooperative and constructive communication, which are necessary for overcoming communication failures and establishing common grounds for understanding. The manual contains a glossary of logical, rhetorical and communication fallacies and mistakes, as well as addresses

major cases of argumentation with the use of stereotypes, which result in failures and inaccurate communication of ideas. Finally, the manual offers cognitive and stylistic tools to be used in effective communication strategies.

The glossary is partly a translation from English and is localized for Armenian realities. It is compiled from materials freely available on the web, e.g. Wikipedia. The manual is designed as an educational tool for self-learning and can be used as an exercise-book. It can also be used while conducting workshops on critical thinking for a variety of beneficiary groups. The manual is suitable for individuals of any age who speak Armenian and who would like to advance their critical thinking capacities.

**Keywords:** Critical thinking, media literacy, information flow, disinformation, misinformation, propaganda, power, values, constructive communication, cooperative communication, communication mistakes, logical mistakes, language stereotypes, logical fallacies.

**Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ)** տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան, և աչքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ հասարակությամբ: ԵՀՀ-ն տարիներ շարունակ աշխատում է քննադատական մտածողության և այլընտրանքային կրթության մեթոդների ասպարեզում իր մի շարք ծրագրերում, ինչպես, օրինակ, մարդու իրավունքների, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի և խաղաղարարության, քաղաքացիական հասարակության հզորացման և այլն: Այն համախմբում է քաղաքացիական հասարակության բարձրակարգ առաջնորդների և հասարակական ոլորտի գործիչների, որոնք իրենց ամենօրյա գործունեության մեջ կոտրում են կարծրատիպերը, պայքարում են մեդիա քարոզչության դեմ և նպաստում հայաստանյան հասարակության համար զարգացման ճիշտ ուղիներ մշակելուն: Որպես «մտագործող» («think and do tank») կառույց, որն աշխատում է քաղաքականությունների մշակումից մինչև դրանց իրագործում, և որի առաքելությունն ու գործունեությունը ծածկում է քաղաքացիական հասարակության և հայկական մեդիաների շատ կարևոր հատվածը, ԵՀՀ-ն լավ դիրքավորված է հասարակության մեջ քննադատական մտածողության օրակարգը խթանելու համար:

**Eurasia Partnership Foundation's (EPF)** guiding vision is a South Caucasus that is peaceful, conflict free and cooperative with civically engaged citizens, socially responsible businesses, and sustainable, accountable and effective third sector organizations. EPF works on critical thinking issues and alternative education methods for many years within its various programs: human rights, conflict transformation and peace-building, and civil society building. EPF is a team of highly motivated civil society and thought leaders and public figures, who dismantle the stereotypes and propaganda myths in their daily activities and participate in building the correct development path for Armenia. As a 'think and do tank', which works the full circle, from policy advice to implementation, and whose remit covers a very significant part of civil society and the media, EPF is well situated to boost the critical thinking agenda in Armenia.

ISBN 978-9939-1-0974-9

9 789939 109749